



Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն

Համաշխարհային բանկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԾՐԱԳԻՐ
(2014-2019)**

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԵՐԵՎԱՆ, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	4
ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	6
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
1.1. Ծրագրի նկարագրություն.....	7
1.2. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի պատրաստման հիմնավորումը.....	9
1.3. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի նպատակը և սկզբունքները.....	9
1.4. Վերաբնակեցման ծավալն ու շրջանակը ԱԽՈԵ-ի ներքո.....	10
2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ և ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	11
2.1 Ինստիտուցիոնալ դաշտը.....	11
2.2 Իրավական շրջանակ.....	18
2.3 Համաշխարհային բանկի քաղաքականություններ.....	27
2.5 Օրենսդրական բացերը լրացնելու վերաբերյալ եզրահանգումներ.....	30
3. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	31
3.1. Իրավունակությունը.....	31
3.2. Իրավունքները.....	32
3.3. Ազդակիր ակտիվների գնահատում.....	35
4. ՎԳԾ-Ի ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	37
4.1. Ազդակիր մարդկանց հաշվառում և գույքագրում.....	37
4.2. Կորուստների որոշումը.....	37
4.3. Հիմնական հետազոտություն.....	38
5.3 ՎԳԾ-ի իրականացման գործընթացը.....	42
5.4 Վերահսկողություն և մոնիտորինգ.....	45
6 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	46
7 ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐ.....	47
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԱՏՐԻՑ.....	48
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....	51
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....	52
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ ՎՆԱՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ.....	53
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՎԳԾ-Ի ԵՎ ԿՐՃԱՏՎԱԾ ՎԳԾ-Ի ՁԵՎԱԶՈՓԵՐԸ.....	55
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑՆԵՐ.....	57
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	60

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՁԻՀ	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
ԱՏԾԿԿ	ՀՀ կառավարության Ֆինանսների նախարարության արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն
ՀՀ կառավարություն ՎԶՄԲ	Հայաստանի Հանրապետության կառավարություն Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԲԿՀ	Բազմակողմանի համաձայնագրեր
ՓՃՀ	Փոխձանաչման համաձայնագրեր
ՀԱՄ	Հավատարմագրման աղգային մարմին
ՉԱԻ	Չափագիտության ազգային ինստիտուտ
ՇՊ	Շահագործում և պահպանում
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ԾԳՓ	Ծրագրի գնահատման փաստաթուղթ
ԾԱԿ	Ծրագրի ազդակիր կողմ
ԾԻԳ	Ծրագրի իրականացման գրասենյակ
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԳՊ	Գնումների պլան
ՊՄԳ	Պետական-մասնավոր գործընկերություն
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողությունների պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎՔՇՓ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ
ՍԱԻ	Ստանդարտների ազգային ինստիտուտ
ԱԽՈԵ	Հայաստանի առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր
ԱՄՆ դոլար	Ամերիկայի միացյալ նահանգների դոլար
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԱԽ	Աշխատանքային խումբ

ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Փաստաթղթում բերված հասկացությունների սահմանումները տրված են ստորև.

- «Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը» վերաբերում է սույն փաստաթղթին, որը Հայաստանի Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի (ԱԽՈԵ) ծրագրի ազդակիր կողմերի վերաբնակեցման ընդհանուր քաղաքականության շրջանակն է հանդիսանում: Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը նկարագրում է ծրագրի ներքո վերաբնակեցումն իրականացնելու համար անհրաժեշտ մեթոդները և գործընթացը, ներառյալ՝ ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության ենթարկված կողմերի փոխհատուցումը, վերաբնակեցումը և վերականգնումը:
- «Ծրագրի ազդակիր կողմ» (ԾԱԿ)՝ ներառում է ցանկացած անձի կամ անձանց, որոնք Ծրագրի կամ վերջինիս ենթաբաղադրիչներից կամ դրանց մի մասից յուրաքանչյուրի իրականացման արդյունքում ցանկացած տան, հողատարածքի (ներառյալ՝ բնակավայրերը, գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը) նկատմամբ կամ իրենց սեփականությունը հանդիսացող կամ գնված այլ անշարժ կամ շարժական գույքի նկատմամբ իրենց իրավունքի, սեփականության իրավունքի կամ շահի նկատմամբ ամբողջությամբ կամ մասամբ, մշտապես կամ ժամանակավոր բացասական ազդեցություն են կրում, կամ բացասական ազդեցության է ենթարկվում վերջիններիս բիզնեսը, զբաղվածությունը, աշխատանքը, բնակության վայրը կամ կացարանը, կամ կենսամակարդակը:
- Համապատասխանությունը/իրավասությունը ապահովելու վերջնաժամկետը հրապարակավ հայտարարվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համապատասխան մարմինների կողմից, իսկ ԾԱԿ-երի մարդահամարը/ուսումնասիրությունը մեկնարկվում է այդ հայտարարությունից անմիջապես հետո¹:
- Սույն քաղաքականության ենթատեքստում «ոչ կամավոր» հասկացությունը վերաբերում է այնպիսի գործողություններին, որոնք կարող են իրականացվել առանց վերաբնակեցման

¹ Որպես կանոն, վերջնաժամկետը այն օրն է, երբ սկսվում է մարդահամարը/ուսումնասիրությունը: Այնուամենայնիվ, տվյալ դեպքում վերջնաժամկետ է համարվում ՀՀ կառավարության համապատասխան մարմինների կողմից հրապարակավ հայտարարությունը: Տես նաև 4.12 ԳՔ-ն տողատակի ծանոթագրություն 21-ը:

ենթակա տեղեկացված անձանց համաձայնության կամ վերջիններիս մոտ ընտրության իրավունքի բացակայության պայմաններում:

- «Վերաբնակեցում»-ը ընդհանուր հասկացություն է, որը վերաբերում է հողի ձեռք բերմանը կամ կորցրած / վնասված գույքի / ունեցվածքի դիմաց փոխհատուցմանը՝ լինի դա փաստացի վերաբնակեցում, թե՛ հողի, կացարանի, գույքի կամ ապրուստի այլ միջոցների կորուստ, և ներառում է այն բոլոր միջոցառումները, որոնք ձեռք են առնվում Ծրագրի իրականացումից ԾԱԿ-երի սեփականությանը և/կամ ապրուստի միջոցներին հասցված վնասներն ամբողջությամբ կամ մասնակի մեղմացնելու նպատակով, ներառյալ՝ փոխհատուցումը, տեղափոխումը (որտեղ հարկն է) և վերականգնումը:
- «Վերաբնակեցման ազդեցություններ»-ը ներառում են մշակաբույսերի և եկամուտների կորուստը՝ ֆիզիկական վերաբնակեցման/տեղափոխման հետ միասին: Վերաբնակեցման ազդեցությունը նշանակալի է, եթե ավելի, քան 200 անձ ֆիզիկապես տեղափոխվում է և/կամ նրանց գույքի 10 տոկոսը կամ ավելին վնասվում/կորում է: Վերաբնակեցման ազդեցությունն «աննշան» է համարվում, եթե 200-ից պակաս անձ է տեղափոխվում և վնասվում է նրանց գույքի 10 տոկոսից պակասը:
- «Տեղափոխում» նշանակում է ԾԱԿ-ի կամ ԾԱԿ-ների տեղափոխումն այն վայրից, որտեղ նրանք մշտապես կամ ժամանակավոր հիմունքով բնակվում էին մինչև ծրագրի սկսելը:
- «Փոխարինման արժեք»-ն ունեցվածքի / գույքի գնահատման մի մեթոդ է, որն օգնում է սահմանել այն գումարը, որը բավարար կլինի վնասված գույքը վերականգնելու և գործարքային ծախսերը հատուցելու համար: Գնահատման այս մեթոդը կիրառելիս, շինությունների և գույքի մաշվածությունը / ամորտիզացիան հաշվի չի առնվում:
- «Փոխհատուցում» նշանակում է ձեռք բերված գույքի փոխարինման արժեքի կանխիկով կամ այլ համարժեքով վճարում:
- «Վերականգնում» նշանակում է սույն ՎՔՇՓ-ով տրվող փոխհատուցման միջոցառումները, որոնք տարբերվում են ձեռք բերված գույքի դիմաց վճարված փոխարինման արժեքից:

- «Հողը / հողատարածք»-ը ներառում է յուրաքանչյուր բան, որ աճում է կամ մշտապես ամրակայացված է տվյալ հողատարածքի վրա, ինչպես օրինակ՝ մշակաբույսերը և շինությունները:
- «Հողի օտարումն» այն գործընթացն է, որի միջոցով պետական մարմինը հարկադրում է անձին մասամբ կամ ամբողջությամբ օտարել իր սեփականությունը հանդիսացող կամ իր տնօրինության տակ գտնվող հողատարածքը, և հասարակական կարիքների համար փոխանցել այն պետական մարմնի սեփականությանը կամ տնօրինմանը՝ համապատասխան փոխհատուցման դիմաց:
- «Օտարման գոտու սերվիտուտ»-ն այն գործընթացն է, որի միջոցով հողի սեփականատերը կամ տնօրինողը հարկադրվում է թույլատրել իր հողի մի մասի շարունակական օգտագործումը այլ անձանց կողմից՝ համապատասխան փոխհատուցման դիմաց, որի դեպքում հողի սեփականության ձևն անփոփոխ է մնում:
- «Սերվիտուտ»-ը Հայաստանի օրենսդրությամբ սահմանվում է որպես հանրային շահերի համար պետական ծրագրերի իրականացման նպատակով հողատարածքի ձեռք բերման Կառավարության իրավունքը: Հողային օրենսգրքի համաձայն (հողվածներ 50 և 100), սեփականատերն իրավունք ունի փոխհատուցում խնդրել և դատարանում բողոքարկել փոխհատուցման կարգը կամ իրավունք ունի դադարեցնել սերվիտուտը:
- «Վիճահարույց հարցերը/բողոքները լուծող հանձնաժողով»-ը Ծրագրի մակարդակով ստեղծված հանձնաժողով է, որտեղ լսվում են վերաբնակեցմանն առնչվող ԾԱԿ-երի բողոքներն ու դժգոհությունները, ներառյալ՝ ծրագրի իրականացման արդյունքում ԾԱԿ-երի հողի, տների և այլ գույքի ձեռք բերելը և ապրուստի միջոցների կորուստը:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի նպատակն է ընդհանուր ուղեցույց ապահովել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Հայաստանի Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ժամանակ առաջացած բացասական ազդեցություններին ժամանակին և համապատասխան ձևով անդրադառնալու, դրանք նվազեցնելու և/կամ մեղմացնելու նպատակով արդյունավետ միջոցառումներ

իրականացնելու համար, մասնավորապես՝ վերաբնակեցման և դրանից ծագող խնդիրների առաջացման դեպքում: Համաշխարհային բանկի Վերաբնակեցման գործառնական քաղաքականության համաձայն ՎՔՇՓ մշակելու անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ գնահատման փուլում հնարավոր չէ իմանալ վերաբնակեցման ծավալը և վայրը, ինչը ԱԽՈԵ-ի դեպքն է:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ծրագրի նկարագրություն

Հայաստանի կառավարությունը (ՀԿ) հայտարարել է, որ գիտելիքահեն տնտեսության կառուցումն իր երկարաժամկետ ռազմավարությունն է, որը միտված է բարձրացնելու երկրի արդյունավետությունը՝ բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների մատուցման դաշտում:

Որպես փոքր, դեպի ծով ելք չունեցող և ծանր աշխարհաքաղաքական դիրքում գտնվող երկիր, Հայաստանի կառավարությունն ընդունում է արտահանման մրցակցության կարևորությունը՝ կայուն աճի մոդելին հետամուտ լինելու համար: Այդ համատեքստում ՀԿ-ը դիմել է ՎԶՄԲ-ին՝ ԱԽՈԵ-ի օժանդակության համար վարկ տրամադրելու խնդրանքով:

Ծրագրի զարգացման նպատակն է ամրապնդել Հայաստանում արտահանման և ներդրումների համար բարենպաստ միջավայրը և օժանդակել հայկական ձեռնարկությունների մրցակցությանը: Ծրագրի իրականացումը նախատեսվում է ավարտել հինգ տարվա ընթացքում (2014-2019) հետևյալ չորս բաղադրիչի ուղղությամբ.

1. *Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարձրացում;*
2. *Ներդրումների և արտահանման խթանում;*
3. *Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում;*
4. *Ծրագրի կառավարում, մոնիտորինգ/մշտադիտարկում և գնահատում:*

Բաղադրիչ 1-ը կօժանդակի Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի համակարգի բարելավման այն բարեփոխումների իրականացմանը, որոնք կունենան կարևոր դեր արդյունավետ ծառայությունների տրամադրման համար հիմքի ստեղծման գործում՝ ուղղված ընկերությունների մրցունակության բարձրացմանը: Այս բաղադրիչը բաղկացած է գործողությունների երկու գլխավոր խմբից. (1) Առևտրի խթանման համակարգի արդյունավետության բարձրացում; և (2) Որակի ազգային ենթակառուցվածքի արդյունավետության բարձրացում: Այս բաղադրիչը հիմնվում է արդյունքների վրա, ուստի կառավարությունը կփոխհատուցվի այն համաձայնեցված գործողությունների, ելքերի և արդյունքների դիմաց («Վճարումների և առնչվող ցուցանիշներ» կամ ՎՑ), որոնք հանգեցնում են առևտրի և որակի բարձրացմանն ուղղված գործողությունների բարելավմանը:

Բաղադրիչ 2-ով կամրապնդվեն կառավարության կարողությունները, նպատակ ունենալով ակտիվորեն նպաստել արդյունավետության բարձրացմանն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումներին և տեղական ընկերությունների կողմից իրականացվող արտահանմանը՝ իր Ներդրումների և արտահանման խթանման վերակազմավորված գործակալության միջոցով: Այս նպատակին հասնելու համար օգտագործվելու են երկու հիմնական գործիք. ա) քլաստերի զարգացման պետական-մասնավոր գործընկերություն (PPP/ՊՄԳ), որը կարագացնի արտահանման ներուժ ունեցող արդյունաբերության արդիականացումը՝ ֆինանսավորելով այնպիսի օբյեկտներ, որոնք օգտվում են ծավալարդյունքից և որոնց գործունեությունը կլինի ոչ շահավետ միայն մեկ ընկերությանը պատկանելու պարագայում (օրինակ, նախագծային կենտրոններ, որակի/փորձարկման լաբորատորիաներ և ընդհանուր նյութատեխնիկական ենթակառուցվածք; բ) Հետազոտական և զարգացման (ՀևԶ) ՊՄԳ, որոնց նպատակը կլինի արդյունավետության բարձրացմանն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսումը (գլխավորապես բարձր տեխնոլոգիաների, այսինքն SS և ինժեներա-տեխնիկական ծառայությունների դաշտում)՝ բարձրացնելու համար նրանց ընգրկվածության մակարդակը երկրում միջազգային կորպորացիաների և գիտական կառույցների միջև համատեղ ծրագրերի ֆինանսավորման ճանապարհով՝ ուղղված նպաստավոր ենթակառուցվածքի ստեղծմանը, ինչպես օրինակ համատեղ լաբորատորիաների, նորարարական կենտրոնների և ՀևԶ կենտրոնների: ՀևԶ ՊՄԳ-ներում ներառվելու ենթակա միջազգային կորպորացիաները շահագրգռված չեն ներդրումներ ուղղել հողի, անշարժ գույքի կամ ենթակառուցվածքի նորոգմանը: Նրանք ակնկալում են, որ հրավիրող կողմը նրանց կտրամադրի ամբողջովին կահավորված տարածքներ՝ հիմնական գրասենյակային սարքավորումներով և կումունալ ծառայություններով: Հայաստանի կառավարությունը կձեռնարկի հասարակական աշխատանքներ ՀևԶ նախաձեռնությունների համար նախատեսված շինությունների և այլ ենթակառուցվածքի ապահովման նպատակով: Երկու գործիքների համար փորձնական ծրագրերը նույնականացված են՝ արդյունաբերության այլ ճյուղերում և միջազգային կորպորացիաների կողմից կրկնօրինակվելու նպատակով: Ծրագիրը կֆինանսավորի նաև ՊՄԳ-ի վարչարարության ծախսերը, այդ թվում ՊՄԳ փորձագետի վարձումը:

Բաղադրիչ 3-ի նպատակն է արդիականացնել չափագիտական և հավատարմագրման ծառայությունները՝ տեղական արտադրողների մրցունակությունը բարձրացնելու մտադրությամբ: Բաղադրիչը բաղկացած է գործողությունների երեք գլխավոր խմբերից. ա) Արդյունաբերական չափագիտության շենքի և լաբորատորիաների վերանորոգում, լաբորատորիաների համար սարքավորումների գնում և Չափագիտության ազգային ինստիտուտի (ՉԱԻ) աշխատակազմի կարողությունների զարգացում, այդ թվում ռեզիդենտ խորհրդականի վարձում; բ) Հավատարմագրման ազգային մարմնի (ՀԱՄ) գրասենյակների վերանորոգում և ՀԱՄ աշխատակազմի կարողությունների զարգացում, այդ թվում ռեզիդենտ խորհրդականի վարձում; և գ) Ստանդարտների ազգային ինստիտուտի համար (ՍԱԻ) ստանդարտների կատալոգի տվյալների շտեմարանի ստեղծում:

Բաղադրիչ 4-ով օժանդակություն կտրամադրվի Էկոնոմիկայի նախարարությանը ծրագրի միջոցառումների իրականացման գործում՝ նույնականացնելով այն թիմը, որը կաշխատի ծրագրում

լրիվ դրույքով: Բաղադրիչը կֆինանսավորի խորհրդատուներին, որոնք կաշխատեն ծրագրի իրականացման թիմի կազմում, այդ թվում ընդհանուր ծրագրի ղեկավարին: Այս բաղադրիչը կֆինանսավորի նաև ծրագրի պատշաճ կառավարման համար անհրաժեշտ աշխատանքները, մասնավորապես տեխնիկական աջակցությունը, և Էկոնոմիկայի նախարարության Ծրագրի կառավարման խմբի, ՀԶԳ, ԻԶՀ, ՉԱԻ, ՀԱՄ, ինչպես նաև ԱՖԾԿԿ լրացուցիչ գործառնական ծախսերը: Բաղադրիչը կֆինանսավորի ծրագրի աուդիտները, ինչպես նաև շահառուների անհրաժեշտ աուդիտներն ըստ ծրագրի իրականացման պլանի:

1.2. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի պատրաստման հիմնավորումը

ԱԽՈԵ Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների համար ՀԲ-ի ֆինանսավորումը տրամադրվում է այն պայմանով, որ Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչ պետք համապատասխանի Համաշխարհային բանկի (ՀԲ) “Ոչ կամավոր վերաբնակեցման” թիվ 4.12 Գործառնական քաղաքականությանը (ԳՔ): ՀԲ 4.12 ԳՔ-ը սահմանում է, որ Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը (ՎՔՇՓ) պետք է մշակվի, եթե վերաբնակեցման ծավալը և վայրը չեն կարող հստակ որոշվել Ծրագրի գնահատման փուլում:

Նմանատիպ բազմաբաղադրիչ ծրագրի համար նպատակահարմար և իրատեսական չէր լինի հատկացված ժամանակի շրջանակներում առանձին գնահատել յուրաքանչյուր բաղադրիչը/ ենթաբաղադրիչը: Կկատարվի նոր շինարարություն ենթադրող Ծրագրի բաղադրիչների/ ենթաբաղադրիչների վերաբերյալ գրավոր փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն, որը հնարավորություն կտա բացահայտել հնարավոր ազդեցությունների ամենահավանական տիրույթը և մշակել առավել համապատասխան և ողջամիտ մեղմացնող միջոցառումները: Կարևոր կլինի սույն ՎՔՇՓ-ի հիմնական եզրահանգումները և առաջարկությունները, ըստ անհրաժեշտության, հարմարեցնել / համապատասխանեցնել ծրագրի իրականացման ընթացքում:

1.3. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի նպատակը և սկզբունքները

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի նպատակն է առաջնորդել Վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) մշակումը, որը կերաշխավորի, որ հետագա վերաբնակեցմանն առնչվող ցանկացած խնդրի առաջացման դեպքում, դրանից ազդեցություն կրած բոլոր կողմերն իրենց կորուստների դիմաց կփոխհատուցվեն իրենց կորուստի փոխարինման շուկայական արժեքով, և վերականգնման միջոցառումներով այնպիսի կենսական պայմաններ կապահովվեն ազդակիր կողմերի համար, ինչպիսին կլինեին ծրագրի բացակայության դեպքում:

Սկզբունքն այն է, որ պետք է ըստ հնարավորության խուսափել ոչ կամավոր վերաբնակեցումից կամ նվազեցնել դրա ազդեցությունները՝ ծրագրի նախագծային փուլում ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքները²: Եթե հնարավոր չէ խուսափել վերաբնակեցումից, ապա այդ գործողությունները պետք է դիտարկվեն և իրագործվեն որպես կայուն զարգացման ծրագրեր՝ տրամադրելով բավարար ներդրումային ռեսուրսներ և հնարավորություն տալով, որ անձը, որը տեղափոխվել է ծրագրի իրականացման արդյունքում, օգուտի իր մասնաբաժինը ստանա ծրագրից: Ավելին, վերաբնակեցման հիմնական հարցերի կապակցությամբ խորհրդակցություններ պետք է անցկացվեն տեղափոխման ենթակա անձանց հետ, և նրանք պետք է մասնակցեն վերաբնակեցման ծրագրերի նախագծմանն ու իրագործմանը: Նրանց նաև պետք է աջակցություն ցուցաբերել իրենց ապրուստի միջոցներն ու կենսամակարդակը բարելավելու ուղղությամբ տարվող աշխատանքներում, կամ, առնվազն, դրանք իրականում վերականգնել մինչև նախածրագրային մակարդակը կամ ծրագրի իրականացման պահին առկա մակարդակը՝ հիմնվելով ամենաբարձր մակարդակի վրա: Այս սկզբունքները և դրանցից բխող վերաբնակեցման միջոցառումները կիրառվում են ԱԽՈԵ Ծրագրի և դրա բոլոր ենթաբաղադրիչների համար՝ անկախ նրանից, թե արդյոք վերաբնակեցման խնդիրների մասշտաբը, ծավալը և բարդությունը պահանջեն վերաբնակեցման պլանների մշակում, թե՛ ոչ: Վերաբնակեցման քաղաքականության իրականացման հետ կապված ռիսկը վերաբերում է 2.3, 3.1 և 3.2 Ենթաբաղադրիչներին:

1.4. Վերաբնակեցման ծավալն ու շրջանակը ԱԽՈԵ-ի ներքո

ԱԽՈԵ շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքները, որոնք կարող են ունենալ հավանական բացասական հետևանքներ ծրագրի հետ առնչություն ունեցող ցանկացած կողմի վրա և պահանջել վերաբնակեցում, տեղաշարժ, վերականգնում կամ փոխհատուցման որևէ ձև, հիմնականում ԱԽՈԵ-ի 2.3, 3.1 և 3.2 ենթաբաղադրիչներով նախատեսվող շինարարական աշխատանքներն են:

Մասնավորապես, ԱԽՈԵ ծրագրի շրջանակներում պլանավորվում են հետևյալ շինարարական աշխատանքները.

Շինությունների կառուցում, ինչպես օրինակ նախագծային կենտրոնների, որակի և տեստավորման լաբորատորիաների, համատեղ լաբորատորիաների, նորարարությունների կենտրոնների և ՀևՁ կենտրոնների, այդ թվում ընդհանուր նյութատեխնիկական ենթակառուցվածքի կառուցում և արտաքին հասարակական կոմունալ հարմարությունների տեղադրում (Ենթաբաղադրիչ 2.3): Այդ շինությունները և ենթակառուցվածքները նախատեսվում է կառուցել բացառապես պետությանը պատկանող տարածքներում, ինչը չի պարունակում վերաբնակեցման զգալի ռիսկեր:

1. Արդյունաբերական չափագիտական շենքերի և լաբորատորիաների վերանորոգում, սարքավորումների գնում և ՉԱԻ աշխատակազմի վերապատրաստում: Այս ենթաբաղադրիչով կֆինանսավորվեն. ա) շենքի նորոգում արդյունաբերական

² Համաշխարհային բանկի Գործառնական քաղաքականություն “Ոչ կամավոր վերաբնակեցման” մասին (ՀՔ ԳՔ 4.12); հունվարի 2002, կ.1

չափագիտության լաբորատորիաների համար; բ) սարքավորումների և կահույքի գնում արդյունաբերական չափագիտության յոթ հիմնական լաբորատորիաների համար, որոնք նախանշված են Չափագիտության ռազմավարության մեջ; գ) կարողությունների զարգացում լաբորատորիաների արդյունավետ և օպերատիվ աշխատանքի համար, այդ թվում միջազգային ռեզիդենտ խորհրդականի վարձում (Ենթաբաղադրիչ 3.1):

2. ՀԱՄ գրասենյակների վերազինում և ՀԱՄ-ի աշխատակազմի ներուժի զարգացում: Այս ենթաբաղադրիչով կֆինանսավորվի հետևյալը. ա) ՀԱՄ-ի գրասենյակների վերազինում, այդ թվում կահույքի գնում; բ) ՀԱՄ-ի աշխատակազմի ներուժի զարգացում, այդ թվում միջազգային ռեզիդենտ խորհրդականի վարձում, որը կզարգացնի աշխատակազմի հմտությունները և կիրականացնի վերապատրաստման դասընթացներ ՀԱՄ-ի արդյունավետ և օպերատիվ աշխատանքի համար; (գ) առցանց հայտերի համակարգի և տվյալների բազայի ստեղծում (Ենթաբաղադրիչ 3.2):

Վերանորոգման (Ենթաբաղադրիչ 3.1) և վերազինման (Ենթաբաղադրիչ 3.2) աշխատանքները կիրագործվեն պետական հողի վրա և հողի օտարում կամ վերաբնակեցում չի ակնկալվում:

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2.1 Ինստիտուցիոնալ դաշտը

Մի քանի հաստատություններ՝ յուրաքանչյուրը տարբեր դերերով և պարտականություններով, պատասխանատու կլինեն ՎՔՇՓ-ի սկզբունքների և նպատակների հսկողության և իրականացման համար՝ հաջորդող ՎԳՊ-ը մշակելու և իրականացնելու ժամանակ (անհրաժեշտության դեպքում)³: Ստորև ներկայացված են եթե ոչ բոլոր, ապա այն հաստատությունների մեծ մասը, որոնք ունեն որևէ դեր, կապված ԱԽԵՈ Ծրագրի իրականացման հետ առնչվող վերաբնակեցման և վերաբնակեցման այլ խնդիրների հետ: Սույն բաժնում՝ ստորև, նաև ներկայացվում է վերաբնակեցման և առնչվող խնդիրների գործընթացներում ներգրավված առանցքային դերակատարների դիագրամը՝ ներառելով դրանց դերերն ու փոխհարաբերությունները:

Ընդհանուր ակնարկ


Էկոնոմիկայի նախարարությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում սույն ՎՔՇՓ-ի ներքո իրականացվող վերահսկողության և մոնիտորինգի բոլոր գործողությունների համար. ԷՆ-ը ցուցումներ կտա, կվերահսկի և կզեկուցի ծրագրերի և ենթաբաղադրիչների առաջընթացի վերաբերյալ և կկարգավորի կենտրոնական կառավարության մակարդակով վերաբնակեցման

³ Տես ստորև բաժին 5

խնդիրները, որոնք պահանջում են գործողություն և համակարգում: ԷՆ-ը պատասխանատու է վերաբնակեցմանն առնչվող գործողությունների վերահսկողության և կառավարման համար:

ԾԻԳ-ը պատասխանատու կլինի վերաբնակեցման հետ կապված ռիսկերի գնահատման, համապատասխան եզրակացությունների տրամադրման, ՎԳՊ-ի մշակման և առօրյա պարտականությունների համար, այդ թվում տեղամասի վիզուալ գնման և վերոհիշյալ փաստաթղթերի մշակման համար: Ծրագրի իրականացման ընթացքում ԾԻԳ-ը պետք է ուղղակիորեն համակարգի այդ աշխատանքները (այդ գործառնությունների կատարումը կսահմանվի ԾԻԳ-ի հետ աշխատող (այդպիսիք լինելու դեպքում) խորհրդատուների Տեխնիկական առաջադրանքների մեջ) և ապահովի, որ ծրագրի բոլոր գործընկերների գործողությունները համապատասխանեն ՎԳՊ-ին: Ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնը (ԱՖՕԿԿ) պատասխանատու կլինի Համաշխարհային բանկի հետ հարաբերությունների համակարգման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, ՎԳՕ-ի ֆինանսական կառավարման համար: Վերաբնակեցման քաղաքականությանն առնչվող բոլոր միջոցառումների նախաձեռնման և իրականացման վերջնական պատասխանատվությունը կկրի Էկոնոմիկայի նախարարությունը:

Պատկեր 1. Վերաբնակեցման և վերաբնակեցման խնդիրներում ներառված հիմնական դերակատարները



Այլ կազմակերպություններ, որոնց հետ ԷՆ-ը կհամագործակցի և կհամակարգի վերաբնակեցման խնդիրների ենթատեքստում, ներառում են ստորև նշվածները, սակայն դրանցով չեն սահմանափակվում⁴: Ստորև ներկայացված են ընտրված կազմակերպությունների հիմնական գործառնությունները, որոնք կարող են վերաբերել վերաբնակեցման հետ կապված խնդիրներին:

⁴ Համապատասխան հաստատությունների ցանկը ներկայացված է համաձայն ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 14-ի N: 26 որոշման, որը սահմանում է հողային ռեսուրսների պետական լիազորված մարմինները Հայաստանի Հողային օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, և թարմացվել է Հայաստանի կառավարության պաշտոնական կայքից՝ www.gov.am

Ազգային մակարդակ

1. Էկոնոմիկայի նախարարություն

- Որպես ծրագրի գլխավոր գործընկեր, ԷՆ-ը կլինի առաջատար օղակ ՎՔՇՓ-ի իրականացման բոլոր ասպեկտներում և հանդես կգա որպես գլխավոր դերակատար, որը կապահովի Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական քաղաքականությունների պահպանումը ծրագրի բոլոր գործողությունների շրջանակներում և իրականացման բոլոր գործընկերների կողմից:
- Համաձայնեցնելով կենտրոնական և տարածքային կառավարության գործակալությունների հետ, որոնց պատկանում է ԱԽՈԵ շրջանակներում շինարարության համար հատկացված հողը, կգնահատի վերաբնակեցման հավանական ռիսկերը և որոշակի համայնքներում բնակչությանը հասցրած վնասները, որոնք ենթակա են վերացման (փոխհատուցման):
- Կմշակի առաջարկություններ վնասների վերացման (փոխհատուցման) վերաբերյալ և կներկայացնի դրանք ՀՀ կառավարությանը:

2. ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն (ՏԿՆ):

ՏԿՆ-ը՝ այլ գործառույթների թվում, ունի հետևյալ իրավասություններն ու պարտավորությունները, որոնք կարող են առնչվել վերաբնակեցումից ծագող խնդիրների հետ.

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տարածքային կառավարման քաղաքականության հիմնադրույթների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալ-տնտեսական զարգացման համար օրենքների, ծրագրերի և պլանների մշակում և իրականացում:
- Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակում և իրականացման համակարգում:
- Պետական պահուստի ռեզերվների ձևակերպման ծրագրերի համակարգում և կառավարում և այլն:

3. Բնապահպանության նախարարություն (ԲՊՆ).

ԲՊՆ-ն, այլ գործառույթների թվում, պատասխանատու է բոլոր բնական ռեսուրսների պահպանության, պաշտպանության և վերականգնման համար, ներառյալ՝

- Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի և հանքային ռեսուրսների արդյունավետ կառավարման, օգտագործման և պահպանության, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի և հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցությունների մեղմացման և կանխարգելման պետական քաղաքականության մշակում, կառավարում և իրագործում:

- Բնապահպանական օրենսդրության մշակում և իրականացում, այդ թվում՝ բնապահպանական նորմերը/ստանդարտները և չափանիշները, թույլտվությունները և առնչվող վարձավճարները և այլն:

ԲՊՆ-ը կարող է խորհրդատվություն տրամադրել ՎԳՊ-ի ՇՄԱԳ-ը մշակելու գործընթացում:

ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ունի հետևյալ իրավասություններն ու պարտավորությունները, որոնք կարող են առնչվել վերաբնակեցումից ծագող խնդիրների հետ՝

- Անշարժ գույքի (ներառյալ՝ հողը) միասնական պետական կադաստրի վերաբերյալ պետական քաղաքականության ձևավորում և իրականացում:
- Իր իրավասության սահմաններում հողային ռեսուրսների կառավարման և օգտագործման քաղաքականության հիմնադրույթների մշակում, հողօգտագործման պետական վերահսկողություն՝ հողի նկատմամբ իրավունքների և հողի շուկայի ձևավորման մասով:
- Կադաստրային քարտեզների կազմում, այդ թվում՝ հողերի համար:
- Անշարժ գույքի տեղեկատվական համակարգի ստեղծում և պահպանում, կադաստրային տվյալների տրամադրում:
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրականացում:
- ՀՀ հողային ֆոնդի հողային հաշվեկշռի կազմում և հողերի դասակարգում ըստ տիպերի:
- Անշարժ գույքի՝ այդ թվում նաև հողերի, կադաստրային գնահատում:
- Անշարժ գույքի հարկի բազային դրույքաչափի, այդ թվում նաև՝ հողահարկի, սահմանում:
- Մասնավոր սեփականություն հանդիսացող հողատարածքի նախնական գնի սահմանում, և այլն:

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ունի տարածաշրջանային ստորաբաժանումներ և սերտորեն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Կադաստրը խորհրդատվություն կտրամադրի ՎԳՊ-ը մշակելիս, մասնավորապես՝ ԾԱԿ-երի բացահայտման և նրանց գույքի և սեփականության իրավունքի հաստատման, կորուստների և վնասների գնահատման հարցերում:

Կախված ծրագրի տեսակից, որի համար նախատեսվում է մշակել ՎԳՊ, այդ ՎԳՊ-ը մշակելու գործընթացում խորհրդատվություն կարող են տրամադրել ստորև ներկայացված նախարարությունները.

- *ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (ԷԲՌՆ),* մյուսների թվում, պատասխանատու է բնական պաշարների պահպանման, կայուն օգտագործման և վերականգնման համար և իրականացնում է իր համապատասխան գործառնությունները Հանքային պաշարների գործակալության և Ընդերքի տրամադրման գործակալության միջոցով:
- *ՀՀ Առողջապահության նախարարությունը,* մյուսների թվում, պատասխանատու է տարբեր նպատակներով հողօգտագործման սանիտարական պահպանման գոտիների քաղաքականության սկզբունքները մշակելու և իրավակիրարկելու համար:
- *ՀՀ Մշակույթի նախարարությունը,* մյուսների թվում, մշակում է պատմական և մշակութային հուշարձանների հաշվառման, պահպանության և օգտագործման սկզբունքները, չափորոշիչները, նորմերը, ինչպես նաև հաստատում է պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների նախագծերը եւ պահպանության ռեժիմը:
- *ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը* մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: *Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն ՊՈԱԿ*-ը հանդիսանում է Արտակարգ իրավիճակների նախարարության կազմում գործող կառուցվածքային մարմիններից մեկը:
- *ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը,* այլ գործառնությունների թվում, մշակում է ՀՀ Հողային օրենսգրքի պահանջների համաձայն սահմանված հողատեսակների քաղաքաշինության նպատակներով օգտագործման սահմանափակումները և նորմերը հաստատող քաղաքականության հիմնադրույթները:

Տարածաշրջանային և մարզային մակարդակ

Ստորև նկարագրվում է հողային հարաբերությունների կարգավորման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների դերը՝

- Սահմանված ընթացակարգերի համաձայն մշակում են համայնքի վարչական տարածքի քաղաքաշինական գլխավոր հատակագծերը և իրականացնում են հողերի գոտիավորման և օգտագործման մեխանիզմները:
- Քաղաքաշինական գլխավոր հատակագծերի և սահմանված ընթացակարգերի համաձայն և Սեփականության մասին օրենքով սահմանված կարգով, տրամադրում և տեղաբաշխում են համայնքի սեփականությունը հանդիսացող հողերը:
- Սահմանված ընթացակարգերի և Սեփականության մասին օրենքի համաձայն տնօրինում են համայնքի սեփականությունը հանդիսացող հողերը:
- Իրականացնում են.
 - հողերի համատեղ գրանցում,
 - հողի հարկերի և համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի օգտագործման վարձավճարների հավաքագրում,
 - հողօգտագործման վերահսկողություն և հողօգտագործման նկատմամբ սահմանված սահմանափակումների պահպանում,
 - օրենքով սահմանված այլ լիազորություններ:
- Աջակցում են՝
 - հողի պետական գրանցմանը,
 - համայնքների վարչական տարածքներին հատկացված հողերի պահպանության ապահովմանը,
 - շրջակա միջավայրի և պատմամշակութային նորմերի և դրանց ուղղված միջոցառումների իրականացմանը,
 - հանրապետական և տարածաշրջանային պլաններով սահմանված անտառտնտեսության օգտագործման մեխանիզմների իրագործմանը:

Մարզային պետական մարմինները (Մարզպետարաններ) իրականացնում են կառավարության տարածաշրջանային քաղաքականությունները հետևյալ ոլորտներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, կոմունալ-կենցաղային ծառայություններ, տրանսպորտ և ճանապարհաշինարարություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա

միջավայրի պահպանություն, առևտուր, հանրային ծառայություններ և այլն: Վերհոհիշյալ ոլորտների տարածաշրջանային քաղաքականություններն իրականացվում են մարզպետարանների միջոցով, ինչպես նաև համապատասխան մարզերին ենթակա կազմակերպությունների միջոցով:

Մարզպետարանների ներկայացուցիչները կարող են ընդգրկվել ԾԱԿ-երի Վիճահարույց հարցերը/բողոքները լուծող հանձնաժողովում և խորհրդատվություն տրամադրել ՎԳՊ-ի մշակման և իրականացման գործընթացում՝ որպես հողային հարաբերությունները կարգավորող տարածաշրջանային լիազոր մարմիններ:

Համայնքային մակարդակ.

Վերաբնակեցման պլանի համար ֆինանսական միջոցները կարող են տրամադրվել վարկային միջոցներից և/կամ ՀՀ բյուջեից, և ՀՀ կառավարության լիազոր մարմինը (օրինակ՝ ԷՆ-ը կամ համապատասխան տարածքային կառույցը) կստուգի և կվերահսկի բաղադրիչների/ ենթաբաղադրիչների իրավասության շրջանակներում իրականացվող հողի ձեռք բերման և վերաբնակեցման գործողությունների կատարումը:

ԷՆ-ի առաջարկության հիման վրա, ՀՀ կառավարության լիազոր մարմինը կիրականացնի վերաբնակեցման գործողությունները՝ իր պատասխանատվության տակ գտնվող տարածքում: ԾԻԳ-ը ԷՆ-ի հսկողության ներքո պատասխանատու կլինի ՎԳՊ մշակման համար, ներառյալ մասնավոր հատվածի, գործարարների միությունների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ԾԱԿ-երի նույնականացումը և սոցիալ-տնտեսական հետազոտությունը, Ծրագրի և դրա բաղադրիչների/ենթաբաղադրիչների մասին տեղեկատվությունը ԾԱԿ-երին տրամադրելը և այլն: Այս աշխատանքներին աջակցելու նպատակով կարելի է պայմանագիր կնքել նաև ժամանակավոր խորհրդատուի հետ, որը կկատարի փոխհատուցման ֆինանսական գնահատումը: Անհրաժեշտության դեպքում ԷՆ-ը կմատուցի վերահսկողական և խորհրդատվական ծառայություններ՝ ՎԳՊ իրականացման գործում ՀՀ կառավարության լիազոր մարմնին օժանդակելու նպատակով:

2.2 Իրավական շրջանակ

Հայաստանի Հանրապետության օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հողի առգրավման և վերաբնակեցման հետ առնչվող հարցերի կարգավորման իրավական հիմքերը սահմանվում են հետևյալ իրավական ակտերով՝

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն» (ընդունվել է 1995թ. և լրամշակվել՝ 2005թ.),
2. «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք» (ընդունվել է 05.05.1998-ին, ուժի մեջ է մտել 01.01.1999-ից, հրատարակվել է No 1998/17 Պաշտոնական տեղեկագրում, 10.08.1998-ին.),
3. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.11.2006-ին, ուժի մեջ է մտել 30.12.2006-ից, հրատարակվել է No 2006/64 պաշտոնական տեղեկագրում 20.12.2006-ին),
4. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք» (ընդունվել է 02.05.2001-ին, ուժի մեջ է մտել 15.06.2001-ից, հրատարակվել է No 2001/17 պաշտոնական տեղեկագրում 15.06.2001-ին),
5. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 04.10.2005-ին, ուժի մեջ է մտել 26.11.2005-ից, հրատարակվել է No 2005/71 Պաշտոնական տեղեկագրում 16.11.2005-ին),
6. «ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք» (ընդունվել է 17.06.1998-ին, ուժի մեջ է մտել 01.01.1999-ից, հրատարակվել է No 1998/20 պաշտոնական տեղեկագրում 09.09.1998-ին),
7. «ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք» (ընդունվել է 28.11.2007-ին, ուժի մեջ է մտել 01.01.2008-ից, հրատարակվել է No 2007/64 պաշտոնական տեղեկագրում 19.12.2007-ին):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 8-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականության նկատմամբ իրավունքը (սեփականատիրության իրավունք) ճանաչվում և պաշտպանվում է Հայաստանի Հանրապետությունում: Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականությունը կարող է օտարվել հասարակության և պետության կարիքների համար միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքում՝ օրենքով սահմանված ընթացակարգի և համապատասխան փոխհատուցման հիման վրա: Այս ենթատեքստում հատուկ ուշադրություն պետք է դարձնել «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա»-յի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածին, որը սահմանում է՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի հանգիստ տնօրինել իր գույքը: Ոչ ոք չպետք է զրկվի իր գույքից՝ բացառությամբ հանրային շահի համար և օրենքով սահմանված պայմանների և միջազգային օրենքի հիմնադրությունների համաձայն»:

ՀՀ Քաղաքացիական և Հողային օրենսգրքերը

Թեև հողի/սեփականության առգրավման գործընթացը հիմնականում ղեկավարվում է Քաղաքացիական օրենսգրքով, սակայն գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման ժամանակ, որոնք վերաբերում են ուրիշ անձի սեփականությունից սահմանափակ օգտվելու իրավունքին: Այս խնդիրները դիտարկվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական և Հողային օրենսգրքերում:

Քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածը (ինչպես նաև Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածը) սահմանում է, որ հողամասի սեփականատերերը/օգտագործողները կարող են իրենց հարևան հողամասի սեփականատիրոջից և/կամ մեկ այլ հողամասի սեփականատերերից պահանջել իրենց շնորհել հողակտորների սահմանափակ օգտագործման իրավունք (*սերվիտուտ*): Սերվիտուտ կարող է սահմանվել հարևան հողամասով քայլելու, ձիավարելու և մեքենա վարելու համար, էլեկտրահաղորդման գծերի, հաղորդակցման և խողովակաշարերի տեղադրման և շահագործման, ջրամատակարարման և մեխորացիայի նպատակներով: Սերվիտուտը կարող է լինել կամավոր կամ հարկադիր, եթե սերվիտուտի վերաբերյալ համաձայնություն չի ձեռք բերվում կողմերի միջև: Քաղաքացիական օրենսգրքի 212 (3)-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային կարիքների ծառայող խողովակաշարերի, ճարտարագիտական ենթակառուցվածքների շահագործման և պահպանման համար պետք է սահմանվի հարկադիր, անհատույց սերվիտուտ:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենք

Հողի/սեփականության առգրավման և վերաբնակեցման խնդիրները կարգավորող ամենակարևոր իրավական ակտը՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքն է: Օրենքը սահմանում է սեփականության օտարման դեպքերը և իրականացման ընթացակարգը:

Օրենքի 3-րդ հոդվածը բացառիկ՝ հանրային գերակա շահը սահմանում է որպես օտարման սահմանադրական հիմքը, ինչպես նաև տամադրում է գործընթացի հետևյալ պահանջները. (ա) օտարումն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն, և (բ) օտարվող սեփականության դիմաց վճարվում է նախնական համարժեք փոխհատուցում:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է այն սկզբունքները/պայմանները, որոնց համաձայն պետք է որոշվի բացառիկ՝ գերակա հանրային շահը: Այսպիսով, օրենքը սահմանում է հետևյալը. (ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականատիրոջ շահերից, (բ) հանրային շահի արդյունավետ իրականացումը հնարավոր չի լինի ապահովել առանց այդ սեփականության

օտարման, (գ) սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, (դ) հանրային շահը գերակա պետք է ճանաչվի Կառավարության որոշմամբ, (ե) բացառիկ հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

Նույն հոդվածը սահմանում է, որ բացառիկ հանրային շահը պետք է ծառայի հետևյալ նպատակներին. (ա) հասարակության և պետության անվտանգության պաշտպանություն, (բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացում, (գ) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների պահպանություն և բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծում և պահպանում, (դ) շրջակա միջավայրի պահպանություն, (ե) կրթության, առողջապահության, սպորտի, ինչպես նաև գիտության և մշակույթի զարգացում, (զ) հեռահաղորդակցության, տրանսպորտի, էներգետիկայի, հողօգտագործման, քաղաքաշինական, էներգա- և ջրամատակարարման ոլորտներում համայնքային և միջհամայնքային նշանակության ծրագրերի իրականացում, (է) քաղաքացիների սեփականության, առողջության և կյանքի պաշտպանություն, (ը) արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունների կանխարգելում և/կամ մեղմացում/կրճատում:

Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության չափը/սահմանները որոշելու հետ առնչվող խնդիրները: Մասնավորապես, օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի օտարման դեպքում դրա հետ օտարման են ենթակա նաև նրա վրա գտնվող անշարժ գույքի բոլոր բաղադրիչները (շինություններ և այլ գույք), ինչպես նաև հողամասում արված բոլոր բարելավումները: Շինության/շենքի օտարման դեպքում, դրա հետ նաև օտարման են ենթակա սեփականության օգտագործման համար անհրաժեշտ հողամասերը: Նման պահանջը պետք է ներկայացվի բացառիկ՝ գերակա հանրային շահի ճանաչման մասին կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Այստեղ հարկ է նշել, որ *Մարդու իրավունքների եվրոպական դատարանն* ունի հստակ սահմանված նախադեպային իրավունք, որը վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածում գործածված “ունեցվածք” (սեփականության իրավունք, սեփականություն) հասկացության պարզաբանմանը: Շատ ցանկալի է այդ ամենը հաշվի առնել օտարման ենթակա սեփականության սահմանները որոշելիս: Այդ իմաստով հետաքրքրական են հետևյալ պարզաբանումները:

Բրոնիովսկու դեպք, Լեհաստան, կետ 129. «1-ին Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում «սեփականություն» հասկացությունն անկախ նշանակություն ունի, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով, և անկախ է տեղական գործող օրենքով սրվող պաշտոնական դասակարգումից: Ինչպես նյութական իրերը, այդպես և ունեցվածք կազմող որոշ այլ իրավունքներ և շահեր նույնպես կարող են դիտարկվել որպես «սեփականության իրավունքներ» և՛ հետևաբար, որպես «սեփականություն»՝ սույն հիմնադրույթի նպատակներով: Յուրաքանչյուր դեպքում խնդիրը, որը պետք է ուսումնասիրվի, այն է, թե արդյո՞ք այդ դեպքի հանգամանքները՝ դիտարկվելով որպես մի ամբողջություն, հայցվորին էական շահի իրավունք են շնորհում՝ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված»:

Կոպեչկու դեպք, Սլովակիա, կետ 25. «Ռատարանը հիշեցնում է, որ նախադեպային իրավունքի համաձայն, «սեփականությունը» 1-ին Արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող իմաստով կարող է նշանակել «գոյություն ունեցող սեփականություն» կամ ունեցվածք, այդ թվում՝ բողոքներ, որոնց դեպքում հայցվորը կարող է վիճարկել, որ ինքը սեփականության իրավունքը ձեռք բերելու առնվազն «օրինական ակնկալիքներ» ունի»:

Բացի դրանից, օրենքը սահմանում է, որ պետությունը, համայնքը և/կամ կազմակերպությունը կարող են հանդես գալ որպես հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության ձեռքբերողներ:

Օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանափակումները, որոնք առաջ են գալիս բացառիկ՝ գերակա հանրային շահի ճանաչման մասին կառավարության որոշման արդյունքում, ենթակա են գրանցման օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն՝ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում: Կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ 7-օրյա ժամկետում, այդ որոշումն ուղարկվում է օտարվող սեփականության սեփականատերերին և այդ սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող այլ անձանց: Կառավարության որոշումը ենթակա է պարտադիր հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և ոչ պակաս, քան 3000 օրինակ տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցում: Այն կարող է բողոքարկվել դատարանում՝ ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածը նաև սահմանում է, որ Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության լիազոր մարմնի կողմից կազմվում է օտարման ենթակա սեփականության

նկարագրության արձանագրությունը (հաշվառում), և սեփականատերը և օտարման ենթակա սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցելու այդ գործընթացում: Հաշվառման/արձանագրության մեկ օրինակն ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց՝ այն ավարտվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում: Հաշվառումն/արձանագրությունը կարող է բողոքարկվել լիազորված մարմնում կամ դատարանում այն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքը նաև ճանաչում է օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության տարբերակը (որը նաև ներառում է հաշվառման պատրաստումը), որն իրականացվում է հնարավոր ձեռքբերողի խնդրանքով մինչև կառավարության կողմից վերահիշյալ որոշման ընդունումը: Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է կառավարության որոշման հիման վրա:

Օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականությունը ձեռքբերողը/գնորդը պարտավոր է մինչև կառավարությամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ հանդիսացող սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը, սեփականատերերին և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող այլ անձանց ուղարկել սեփականության օտարման պայմանագրի նախագիծը: Օտարվող սեփականության սեփականատերերը պարտավոր են պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ձեռքբերողին/գնորդին իրազեկել այն գույքային սեփականություն ունեցող անձանց մասին, որոնք չեն գրանցել իրենց իրավունքները կամ ենթակա չեն եղել պետական գրանցման: Եթե օտարվող սեփականության սեփականատերը չի տեղեկացնում ձեռքբերողին վերոնշյալ անձանց մասին, ապա ինքն է պատասխանատվություն կրում առանց այդ գույքային իրավունքներ ունեցողների մասնակցության սեփականության օտարման հետևանքով նրանց պատճառած վնասների/կորուստների համար:

Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը պետք է համարժեք փոխհատուցում տրվի, և սույն օրենքի շրջանակներում համարժեք փոխհատուցում է համարվում օտարվող սեփականության/գույքի շուկայական արժեքը 15 տոկոսով գերազանցող գումարը: Անշարժ գույքի և/կամ սեփականության նկատմամբ իրավունքների շուկայական արժեքը սահմանվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն: Այս առումով հարկ է նշել, որ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքը (հոդված 8-րդ) սահմանում է, որ պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման դեպքերում անշարժ գույքի

գնահատումը պարտադիր է, մինչդեռ գնահատումը իրականացվում է լիցենզավորված գնահատողների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Գնահատման արդյունքներն արտացոլվում են գնահատման հաշվետվությունում, որն, այլ բաների թվում, նաև ներառում է. (ա) անշարժ գույքի գնահատման սուբյեկտների անվանումները, իրավաբանական հասցեները, (բ) անշարժ գույքը տեղագննելու և գնահատելու ամսաթիվը, (գ) անշարժ գույքի գնահատման դասական երեք մեթոդների կիրառման հղումները գնահատման ստանդարտին, (դ) գնահատվող սեփականության նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները, (ե) գնահատվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալները, դրանց հավաստիության աղբյուրը, զ) անշարժ գույքի տեղում գնման արդյունքները և գնահատվող սեփականության նկարագրությունը, (է) գնահատման դասական երեք մեթոդների կիրառման արդյունքում ստացված շուկայական գների հաշվարկները և դրանց համաձայնեցումը անշարժ գույքի գնահատման արդյունքների առևտրային գաղտնիության պայմանները, (թ) սեփականության/անշարժ գույքի ամենաարդյունավետ օգտագործման վերլուծությունը, եթե պատվիրատուն այդպես է պահանջում, ժ) անշարժ գույքի գնահատման գործընթացում օգտագործված փաստաթղթերի ցանկը, (ի) գնահատողի պատասխանատվությունը պատվիրատուի և երրորդ անձանց առջև, (լ) գնահատողի անունն, ազգանունը, ստորագրությունը և լիցենզիայի համարը:

Օրենքը նաև սահմանում է, որ օտարման ենթակա սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց փոխհատուցում է տրամադրվում՝ օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից: Իսկ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ եթե օտարման պայմանագրի նախագիծն օտարվող սեփականության սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեց անձանց ուղարկելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, օտարման պայմանագիր չի կնքվում վերջիններիս և ձեռքբերողի միջև, ապա ձեռքբերողը պարտավոր է փոխհատուցման ենթակա գումարը պահ հանձնել նոտարի կամ դատարանի դեպոզիտ հաշվին: Փոխհատուցման չափը որոշվում է այն դեպոզիտ հաշվին հանձնելուց ոչ ավել, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ: Եթե օտարվող սեփականության սեփականատերերը և/կամ սեփականության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձինք ստանում են դեպոզիտ հանձնված գումարը մինչև սեփականության օտարման մասին դատարանի վճիռն, ապա օտարման մասին պայմանագիրը համարվում է կնքված:

Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում օտարման պայմանագիրը չի կնքվում, ապա

ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ընթացքում դատարան դիմել: Այս դեպքում, դատարանի քննարկման առարկա կարող է դառնալ միայն փոխհատուցման չափի հարցը: Սեփականության օտարման համար հիմք է հանդիսանում փոխհատուցման չափի մասին դատարանի վճիռը:

Օրենքը նաև սահմանում է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման անվավեր ճանաչելու հիմքերը: Մասնավորապես, 16-րդ հոդվածը սահմանում է, որ եթե ձեռքբերողը՝ օրենքով սահմանված ժամանակահատվածում, օտարվող սեփականության սեփականատիրոջը և/կամ գույքային իրավունքներ ունեցող անձանց չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ նոտարի կամ դատարանի դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը, կամ չի դիմում դատարան օրենքով սահմանված կարգով, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է սեփականության ձեռք բերման իրավունքից, և այդ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու բոլոր փաստաթղթերը համարվում են անվավեր: Նշված որոշումը կարող է դատարանի կողմից ճանաչվել անվավեր, եթե ձեռքբերողը չի սկսում սեփականության օտարման համար հիմք հանդիսացող գործունեությունը որոշումը ընդունելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:

Վերաբնակեցման ծրագրին առնչվող մյուս հարցերը կապված են դատարանի դիմելու ընթացակարգերի հետ, եթե ԾԱԿ-երը որոշում են դատարանի միջոցով լուծել վերաբնակեցման գործընթացում ծագող վեճերը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ օրենքն ունի «գործողությունների սահմանափակում»-ը սահմանող մի քանի հիմնադրույթներ, օրինակ՝ դատարանում որոշ խնդիրների բողոքարկման կամ վիճարկելու ժամանակահատվածը և այլն: Այսպիսով, օրենքը սահմանում է, որ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումը կարող է բողոքարկվել դատարանում այն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ նախնական ուսումնասիրություն անցկացնելու մասին կառավարության որոշումը՝ այն ընդունելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Այս որոշումները պետք է բողոքարկվեն Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ *Վարչական դատավարության օրենսգրքի* պահանջների համաձայն: Օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց գործողություններով և/կամ անգործությամբ և վարչական ակտերով խախտվել են կամ կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները

և ազատությունները: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսգիրքը չի սահմանում Վարչական դատարանում գործերի քննության ժամկետները: 81-րդ հոդվածը սահմանում է, որ դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով, առանց հետաձգումների: Գործի դատաքննության նախապատրաստվելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում: Բացի վերոնշյալից, Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է պարզեցված/արագացված դատաքննության որոշ դեպքեր, որոնց թվում մեր դեպքին առավել կիրառելիները հետևյալն են՝ (ա) երբ ներկայացված հայցն ակնհայտորեն հիմնավորված է, կամ (բ) երբ ներկայացված հայցն ակնհայտորեն անհիմն է: Վարչական դատարանի դատական ակտը/որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Իրավիճակը փոքր-ինչ այլ է, երբ օրենքի 13-րդ հոդցածով սահմանվող դեպքերը վիճարկվում են դատական կարգով (դատարանի միջոցով օտարման պայմանագրի կնքում): Այս դեպքերը քննվում են Ընդհանուր իրավասության դատարանում, եթե վիճարկվող փոխհատուցման գումարը 5 մլն. դրամը չի գերազանցում, և Քաղաքացիական դատարանում, եթե այն հավասար կամ գերազանցում է 5 մլն. դրամը: Դատական քննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների համաձայն: Ինչպես նախորդ դեպքում, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նույնպես որևէ խիստ ժամկետներ չի սահմանում դեպքերի դատաքննության համար, և սահմանում է, որ գործը պետք է քննվի/լսվի դատարանում համապատասխան ժամկետում (111-րդ հոդված): Այս դեպքում դատարանը կարող է կիրառել լսման արագացված ժամկետներ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը իրավունք ունի արագացված դատաքննություն կիրառել, եթե՝ (ա) գործի էությունից բխում է դրա անհապաղ քննության անհրաժեշտությունը, (բ) հայցն ակնհայտ հիմնավոր է, (գ) հայցն ակնհայտ անհիմն է:

Ընդհանուր իրավասությունների դատարանի և Քաղաքացիական դատարանի որոշումները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 1 ամիս հետո և կարող են վիճարկվել Վճռաբեկ դատարանում: Վճռաբեկ դատարանը ևս չունի հստակ սահմանված ժամկետներ, և դեպքը պետք է քննի խելամիտ ժամկետում՝ հաշվի առնելով Ընդհանուր իրավասությունների/Քաղաքացիական դատարաններում դեպքի քննության ժամկետները: Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից հետո:

2.3 Համաշխարհային բանկի քաղաքականություններ

Համաշխարհային բանկի 4.12 ԳԲ-ի հիմնանպատակն է ուսումնասիրել ոչ կամավոր վերաբնակեցումից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելու բոլոր այլընտրանքները: Այն դեպքերում, երբ վերաբնակեցումն անխուսափելի է, տեղափոխված անձանց կենսամակարդակը պետք է վերականգնել կամ բարելավել այն չափանիշներին համապատասխան, որոնք գերիշխում էին նախքան ծրագրի իրականացումը: Քաղաքականությունը վերաբերում է հողի և այլ գույքի առգրավմանը և երբ հողի ձեռք բերման հետևանքով առաջանում է կացարանի կորուստ, գույքի ամբողջական կամ մասնակի կորուստ կամ գույքի հասանելիության և եկամտի աղբյուրների կամ կենսական այլ միջոցների կորուստ: Քաղաքականությունը կիրառվում է նաև ոչ կամավոր վերաբնակեցմանը բերող այլ գործողությունների նկատմամբ, որոնք ՀԲ-ի կարծիքով (ա) ուղղակիորեն և զգալի կերպով կապված են ՀԲ օժանդակությամբ իրականացվող ծրագրի հետ, (բ) անհրաժեշտ են ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակներին հասնելու համար, և (գ) իրականացվում են կամ պլանավորվում են իրականացվել ծրագրին զուգահեռ:

2.4 Հայաստանի Հանրապետության օրենքների և Համաշխարհային բանկի «Ոչ կամավոր վերաբնակեցման» քաղաքականության համեմատություն

Աղյուսակ 2. Հայաստանի Հանրապետության Օրենքների և Համաշխարհային բանկի «Ոչ կամավոր վերաբնակեցման քաղաքականության» համեմատություն

Հայաստանի Հանրապետության օրենսդրություն	ՀԲ-ի Ոչ կամավոր վերաբնակեցման քաղաքականություն	Եզրահանգումներ օրենսդրական բացերի վերաբերյալ	Գործողություններ բացերը լրացնելու համար
1. Փոխհատուցում ստանալու իրավասություն			
<p>ա) Մեփականության (հող, շենքեր/շինություններ, մշակաբույսեր և այլն) նկատմամբ պետական գրանցված սեփականության իրավունք ունեցող անձինք իրավասու են ստանալ համարժեք փոխհատուցում ծրագրի իրականացման արդյունքում օտարման ենթակա հողի, հասցված վնասների/քանդված շինությունների, կորցրած բերքի դիմաց («Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք), կամ այն դեպքերում, երբ իրենց հողը օտարման ենթակա չէ, սակայն մասամբ օգտագործվում է հանրային ծրագրերի իրականացման նպատակով (սերվիտուտ)։ ((ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, (210-218-րդ հոդվածներ), ՀՀ Հողային օրենսգիրք (50-րդ և 100-րդ հոդվածներ)): Մեփականության նկատմամբ գրանցված գույքային իրավունքներ (վարձակալության, ազատ օգտագործման իրավունք և այլն) ունեցող անձինք իրավասու են ստանալ համարժեք փոխհատուցում, մինչդեռ փոխհատուցման գումարը ընդգրկված է և վճարվում է սեփականության սեփականատիրոջը վճարվող փոխհատուցումից, («Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (11-րդ հոդված):</p> <p>Այն անձինք, որոնք շինություններ են կառուցել իրենց սեփական հողամասի վրա, սակայն չեն գրանցել դրանք մինչև վերջնաժամկետը, կարող են փոխհատուցում ստանալ (Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված):</p> <p>բ) Այն անձինք, որոնք շինություն(ներ) են կառուցել կամ ծառեր տնկել ուրիշներին պատկանող տարածքների վրա, չեն կարող փոխհատուցում ստանալ կորցրած գույքի դիմաց (տես վերոնշյալ ՀՀ օրենքները):</p>	<p>ա) Հողի նկատմամբ գրանցված իրավունք ունեցող անձանց (ներառյալ՝ տվյալ երկրի օրենքներով սահմանված սովորական և ավանդական իրավունքները) տրամադրվում է համարժեք փոխհատուցում կորցրած հողի դիմաց:</p> <p>բ) Այն անձինք, որոնք չունեն գրանցված սեփականության իրավունքներ հողի նկատմամբ, սակայն պահանջ են ներկայացրել նման հողի կամ գույքի նկատմամբ և նման պահանջները ճանաչվում են երկրի օրենքներով կամ ճանաչվում են վերաբնակեցման պլանում նշված գործընթացի միջոցով, ստանում են փոխհատուցում կորցրած հողի դիմաց, ինչպես նաև այլ աջակցություն, եթե նրանք ծրագրով նախատեսված տարածքը զբաղեցնում էին նախքան հայտարարված վերջնաժամկետը:</p>	<p>Ընդհանուր առմամբ Հայաստանի օրենսդրության և ՀԲ-ի ԳԲ-ի հիմնադրույթները նույնն են, բացառությամբ այն դեպքի, երբ անձինք չունեն գույքի նկատմամբ գրանցված սեփականության իրավունք:</p>	<p>Այս բացը լրացնելու համար առաջարկվում է՝</p> <p>1) հետևել ՀԲ-ի 4.12 ԳԲ-նը,</p> <p>2) Հայաստանի Կառավարությունը թույլ է տալիս ՀԲ-ի ԳԲ-ի կիրառումը ԱՆՈՒԵ Ծրագրի համար</p>

2. Փոխհատուցում ստանալու իրավունք

<p>Հայաստանի օրենսդրությամբ փոխհատուցում տրվում է միայն այն սեփականատերերին և գույքային իրավունքներ ունեցող անձաց, որոնց սեփականության/գույքային իրավունքները ձեռք են բերվել նախքան ծրագրի համար հայտարարված վերջնաժամկետը: Վերջնաժամկետից հետո օրենքի սահմաններից դուրս կատարած բոլոր բարելավումները և գույքի նկատմամբ ստեղծված խոչընդոտները փոխհատուցման ենթակա չեն:</p>	<p>Սույն քաղաքականությամբ սահմանված նպատակներին հասնելու համար, ԾԱԿ-երին վերաբնակեցման աջակցություն է ցուցաբերվում՝ իրենց զբաղեցրած հողամասի դիմաց փոխհատուցման փոխարեն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ աջակցություն, եթե նրանք ծրագրով նախատեսված տարածքը զբաղեցնում էին նախքան հայտարարված վերջնաժամկետը:</p>	<p>Հայաստանի օրենսդրության և ՀԲ-ի ԳՔ-ի հիմնադրույթները նույնն են:</p>	
<p>Սեփականության օտարման դեպքում, սեփականատիրոջը պետք է տրվի համարժեք փոխհատուցում, մինչդեռ համարժեք է համարվում փոխհատուցման այն չափը, որը օտարվող գույքի շուկայական արժեքը 15 տոկոսով գերազանցող գումարն է: («Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (11-րդ հոդված):</p>	<p>Փոխհատուցման չափը պետք է բավարար լինի կորցրած հողեր և այլ գույքը փոխարինելու համար՝ տեղի շուկայական ամբողջական փոխարինման արժեքով:</p>	<p>Եվ Հայաստանի օրենսդրությամբ, և ՀԲ-ի 4.12 ԳՔ-ով նախատեսվում է փոխհատուցում կորցրած/վնասված հողամասի և գույքի դիմաց: Ազգային օրենսդրությունը ավելի շահավետ է ԾԱԿ-երի համար:</p>	
<p>Եկամուտների/ կենսամակարդակի վերականգնման միջոցառումների և/կամ ծայրահեղ ազդեցության ենթարկվող ԾԱԿ-երին և խոցելի խմբերին նպաստ տրամադրելու մասին սահմանափակ դրույթներ: (Տես վերոնշյալ ՀՀ օրենքները)</p>	<p>ՀԲ-ի քաղաքականությամբ պահանջվում է եկամուտների / կենսամակարդակի, մեծ կորուստների, յուրաքանչյուր և բոլոր ԾԱԿ-երի մոտ տեղափոխման ընթացքում առաջացած ծախսերի վերականգնում:</p>	<p>Հայաստանի օրենսդրությամբ սահմանափակ դրույթներ են սահմանվում կորցրած եկամուտների/ կենսամակարդակի փոխհատուցման և/կամ ԾԱԿ-երի մոտ տեղափոխման ժամանակ առաջացած ծախսերի փոխհատուցման վերաբերյալ:</p>	<p>Այս բացը լրացնելու համար առաջարկվում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) հետևել ՀԲ-ի 4.12 ԳՔ-ին, 2) Հայաստանի Կառավարությունը թույլ է տալիս ՀԲ-ի ԳՔ-ի կիրառումը ԱՆՈՆԵ Ծրագրի համար

3. Տեղեկատվության պահանջներ			
<p>Կառավարության այն որոշումը, որով որոշվում է բացառիկ՝ գերակա հանրային շահը, պետք է պատշաճ կերպով տրամադրվի սեփականության սեփականատերերին և գույքի նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձանց, որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Օտարման ենթակա սեփականության սեփականատերը և սեփականության իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցելու օտարման ենթակա գույքի նկարագրության գործընթացում: Նկարագրության արձանագրության օրինակը ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության իրավունք ունեցող անձանց: («Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (7-րդ հոդված):</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներով և հանրային քննարկումների միջոցով համայնքներին տեղյակ պահել իրենց շրջապատող միջավայրում ակնկալվող փոփոխությունների մասին (ՀՀ Կառավարության որոշում No 660, 28 հոկտեմբերի 1998թ.):</p>	<p>Հողի, շինությունների և այլ գույքի, իրավունքների և փոխհատուցման և ֆինանսական աջակցության չափերի քանակական և արժեքային գնահատմանը վերաբերող տեղեկությունը պետք է ամբողջությամբ ներկայացվի ազդակիր անձանց:</p>	<p>Հայաստանի օրենսդրության և ՀԲ-ի ԳԲ-ի հիմնադրույթները գրեթե նույնն են:</p>	

2.5 Օրենսդրական բացերը լրացնելու վերաբերյալ եզրահանգումներ

Հողի ձեռք բերմանն ու վերաբնակեցմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը և ՀԲ 4.12 ԳԲ-ը սկզբունքորեն հավատարիմ են ոչ միայն ազդեցության ենթարկված ընտանիքների անձանց փոխհատուցման նպատակին, այլև՝ վերականգնման նպատակին: Այնուամենայնիվ, հայաստանյան օրենքները հստակ չեն սահմանում վերականգնմանն ուղղված միջոցառումները, և գործնականում դրանք թողնվում են տեղական ինքնակառավարման մարմիններին և կոնկրետ ծրագրի նախաձեռնողներին: ՀՀ օրենքների և ՀԲ-ի քաղաքականության միջև մեկ այլ և բավականին մեծ տարբերությունն այն է, որ 4.12 ԳԲ-ով սահմանվում են իրավունք ունեցող և իրավունք չունեցող սեփականատերերն, ինչպես նաև գրանցված և չգրանցված

բնակիչները, օր.՝ իրավունքի բացակայությունն անձին չի զրկում փոխհատուցումից և կենսամակարդակի վերականգնմանն ուղղված աջակցություն տրամադրելուց: Այս խնդիրները հստակեցնելու և հայաստանյան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ու ՀԲ-ի ԳՔ-ի 4.12 դրույթի միջև եղած օրենսդրական բացերը լրացնելու համար, սույն ՎՔՇՓ-ն նախատեսում⁵ է գույքի բոլոր տեսակների համար փոխարինման արժեքով փոխհատուցման կիրառում, ներառյալ՝ ոչ պաշտոնական/գրանցված իրավունք չունեցող բնակիչների վերականգնումը, և տրամադրում է վերականգնման փաթեթներ (ըստ համապատասխանության կհստակեցվեն ՎԳՊ-ում) այն ԾԱԿ-երին, որոնք կարող է տեղափոխվեն, արտադրողական ունեցվածքի կորուստներ կրեն կամ լուրջ ազդեցության ենթարկվեն⁶:

Բացի այդ, ՀՀ օրենքները հստակ չեն սահմանում հանրային խորհրդակցությունների և տեղեկության հրապարակայնության ընթացակարգերը, և ծրագիրը կապահովի (հնարավոր) ԾԱԿ-երի և, հատկապես, ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության ենթարկվող խոցելի խմբերի, ներգրավումը հանրային խորհրդակցություններում և մասնակցային գործընթացներում՝ ծրագրի իրականացումից առաջ և հետո (տես նաև 6-րդ բաժինը ստորև): Ի լրացում, կհիմնվի ԾԱԿ-երի վիճահարույց հարցերը/բողոքները լուծելու մեխանիզմ (տես նաև 5.2 բաժինը ստորև), և ծրագրի ֆիզիկական իրականացումը չի սկսվի, քանի դեռ ավարտին չեն հասցվել ծրագրի կամ ենթաբաղադրիչի փոխհատուցման և վերականգնման բոլոր միջոցառումները:

ՀԲ 4.12 ԳՔ-ի կետ 4-ի համաձայն, այս միջոցառումները կիրառվում են Ծրագրի բոլոր բաղադրիչների նկատմամբ, որոնք կարող են բերել ոչ կամավոր վերաբնակեցման՝ անկախ ֆինանսավորման աղբյուրից:

3. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Իրավունակությունը

Սույն ՎՔՇ-ում կիրառվող հիմնական սկզբունքն այն է, որ ԾԱԿ-երը պետք է աջակցություն ստանան իրենց կենսամակարդակի, եկամուտ վաստակելու կարողության և արտադրական ծավալների բարձրացման կամ առնվազն դրանց նախաձրագրային մակարդակի վերականգնմանն ուղղությամբ ԾԱԿ-երի գործադրած ջանքերում, որպեսզի օրենքով ամրագրված սեփականության իրավունքի բացակայությունը չզրկի մարդկանց փոխհատուցում և/կամ վերականգնման գծով աջակցություն ստանալու իրավունակությունից:

⁵ Հարկն է նշել, որ առաջարկվող միջոցառումները պետք է հաստատվեն ՀՀ կառավարության և ՀԲ-ի կողմից:

⁶ Փոխհատուցում ստանալու իրավունքի ընդհանուր նկարագիրը տես 3-րդ բաժնում և սույն փաստաթղթի Հավելված 1-ում:

«WBOP4.12»-ը ճանաչում է, որ այն անհատները և տնային տնտեսությունները, որոնք վերջնական ամսաթվից հետո զբաղեցնում են ազդակիր տարածքները, իրավունակ չեն ստանալու փոխհատուցում: Վերջնական ամսաթիվը կսահմանվի և հրապարակավ կհայտարարվի ՀՀ համապատասխան պետական մարմնի կողմից, իսկ ԾԱԿ-երի հաշվառումը կսկսվի վերը հայտարարությունից անմիջապես հետո: Բոլոր այն մարդիկ, ովքեր կտեղափոխվեն ազդակիր տարածք և/կամ կիրականացնեն շինարարական աշխատանքներ, կտնկեն ծառեր և այլն, հանդիսանում են ոչ իրավունակ ԾԱԿ-եր և, ըստ այդմ, չեն ստանա որևէ փոխհատուցում: Նրանց նախապես կտրվի ծանուցում՝ խնդրելով նրանց նախքան ծրագրի իրականացումն ազատել իրենց տարածքները և ապամոնտաժել շինությունները: Սա դյուրինացնելու համար Ծրագիրը կտրամադրի անհրաժեշտ տրանսպորտային միջոցներ նրանց վերաբնակեցման համար:

3.2. Իրավունքները

Հողերի ձեռքբերումը և վերաբնակեցումը կիրականացվի փոխհատուցման և իրավունքների շրջանակում, համաձայն ինչպես ՀՀ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, այնպես էլ «WBOP4.12»-ի: Կոնկրետ բաղադրիչից / ենթաբաղադրիչից բխող ազդեցությունների դիմաց փոխհատուցման որոշման ժամանակ համապատասխանաբար կվերանայվի և կնորացվի իրավունքների մատրիցը և փոխհատուցման նկատմամբ իրավունքների նկարագրությունը⁷:

Իրավունքների մատրիցը հիմնվում է այն ելակետային նկատառման վրա, որ վերաբնակեցման, վերականգնման և փոխհատուցման ծրագրերը պետք է բարելավեն կամ առնվազն պահպանեն ծրագրի իրականացումից առաջ ԾԱԿ-երի ունեցած կենսամակարդակը և ապահովեն նրանց մասնակցությունը Ծրագրի արդյունքներում: Սա արտացոլված է փոխհատուցման հետևյալ սկզբունքներում.

Իրավունակությունը

Փոխհատուցում ստանալու իրավունք կունենան այն ԾԱԿ-երը, որոնց օրենքով սահմանված կարգով պատկանում են հողերը կամ այլ ակտիվները, ինչպես նաև այն ԾԱԿ-երը, ովքեր ի սկզբանե չունեն ֆորմալ սեփականության իրավունք հողի կամ այլ ակտիվների նկատմամբ, բայց երկրի օրենսդրության հիման վրա հանդիսանում են նման իրավունքի պահանջատեր և կարող են ներկայացնել այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են հողի հարկի վճարման ստացականները և բնակության մասին տեղեկանքները կամ ստացել են թույլտվություն տեղական իշխանություններից ազդակիր հողակտորները զբաղեցնելու կամ օգտագործելու համար: Այս իրավունքները կարող են բխել հանրային հողերի շարունակական տիրապետումից, եթե պետությունը քայլ չի ձեռնարկել դրանց վերադարձման ուղղությամբ: Ազդակիր է համարվում հետևյալը (այս ցանկը կարող է չսահմանափակվել ստորև նշվածով).

- Վերաբնակեցում կամ կացարանի կորուստ,
- Մշտապես կամ ժամանակավորապես ազդակիր հողեր,

⁷Իրավունքների պայմանական մատրիցը ներառված է **Հավելված 1-ում**:

- Ակտիվների կամ դրանց օգտագործման հնարավորության կորուստ, ներառյալ տները և այլ շինությունները, մշակաբույսերը, ծառերը և այլ ակտիվները, բիզնեսը և/կամ արտադրական այլ գործոնները, և/կամ
- Ծրագրի արդյունքում կրած եկամտային կորուստներ: Եկամտի կամ ապրուստի աղբյուրների կորուստը հաշվի է առնվում անկախ նրանից, թե արդյոք ազդակիր անձը տեղափոխվում է մեկ այլ վայր, թե՛ ոչ:
- Կարող է քննության առնվել մինչև վերջնական ամսաթիվը ծրագրի տարածքում բնակվող բոլոր ԾԱԿ-երի վնասների փոխհատուցման և/կամ վերականգնման գծով նրանց աջակցության տրամադրման հարցը: Օրենքով ամրագրված իրավունքների կամ սեփականատիրության բացակայությունը նրանց չի զրկում նախատեսված իրավունքներից օգտվելու իրավասությունից:

Փոխհատուցումը

- ԾԱԿ-երը կստանան փոխհատուցում փոխարինման ողջ արժեքի չափով՝ հանած ամորտիզացիան, և կվերատեղակայվեն կամ կվերաբնակեցվեն պատշաճ կարգով նրանց հետո խորհրդակցելու ընթացքում և հետո: ԾԱԿ-երին կառաջարկվեն փոխարինման արժեքի դիմաց փոխհատուցման նախնական գումարները, որպեսզի նրանք հնարավորություն ունենան համեմատելու դրանք գերակայող շուկայական գների հետ,
- Հողի և/կամ տան օտարման հետ կապված բոլոր վճարներն ու հարկերը կչեղարկվեն կամ այլ կերպ կներառվեն հողի և/կամ տան դիմաց փոխհատուցման փաթեթում: Պետական իրավասու մարմինները արտոնյալ մոտեցում կցուցաբերեն այն ԾԱԿ-երի նկատմամբ, ովքեր սեփական միջոցների հաշվին կվերակառուցեն իրենց տները, և կաջակցեն նրանց գույքային անհրաժեշտ իրավունքների և օրինական վկայականների ստացման խնդրում:

Վերաբնակեցման ռազմավարությունները

- Նախապատվությունը կտրվի այլ հողերում ԾԱԿ-երի վերաբնակեցման ռազմավարություններին, եթե նրանց ապրուստի աղբյուրը հողն է: Այս ռազմավարությունները կարող են ներառել պետական հողերում կամ վերաբնակեցման նպատակով ձեռք բերված կամ գնված մասնավոր հողերում մարդկանց վերաբնակեցումը: Փոխարինող հողեր առաջարկելու դեպքում վերաբնակեցվողներին տրամադրվում է հող, որն իր արտադրողական ներուժով, վայրի առավելություններով և այլ գործոններով առնվազն համարժեք է նրանցից վերցված հողին:
- Եթե հողը ԾԱԿ-երի նախապատվելի տարբերակը չէ, կամ եթե հողի տրամադրումը բացասաբար կանդրադառնա որևէ ազգային պարկի կամ արգելոցի շարունակական կայունության վրա, կամ եթե հնարավոր չէ տրամադրել ողջամիտ գնով⁸ բավարար հողեր, ապա ի լրումն հողի և կորցրած այլ ակտիվների դիմաց դրամական փոխհատուցման, պետք է

⁸Համարժեք հողերի բացակայությունը պետք է հիմնավորված գրավոր արձանագրվի և ստանա ՀԲ-ի հավանությունը:

ապահովվեն հողից բացի այլ տարբերակներ, որոնք պետք է ներառեն զբաղվածության կամ ինքնազբաղվածության հնարավորությունների տրամադրումը:

Դրամական փոխհատուցումը

- Կորցրած ակտիվների դիմաց դրամական փոխհատուցման վճարումը կարող է նպատակահարմար լինել, երբ (ա) ապրուստի աղբյուրը հողն է, բայց ծրագրի համար վերցված հողը կազմում է ազդակիր գույքի փոքր մասը⁹, իսկ մնացածը տնտեսապես կենսունակ է, (բ) գոյություն ունի հողի, տների և աշխատուժի ակտիվ շուկա, ԾԱԿ-երը օգտվում են նշված շուկաներից և հողի ու տների առաջարկը բավարար է, կամ (գ) ապրուստի աղբյուրները կապված չեն հողի հետ: Դրամական փոխհատուցման չափը պետք է բավարար լինի կորցրած հողը և այլ ակտիվները վերջնական ամսաթվի դրությամբ տեղական շուկաներում գործող փոխարինման արժեքով ամբողջապես ծածկելու համար:
- Բնակելի, առևտրային և այլ շինությունների դիմաց դրամական փոխհատուցումը կվճարվի այդ շինությունների փոխարինման արժեքի չափով՝ հանած շինության ամորտիզացիան, առանց նվազեցնելու վերաօգտագործման ենթակա նյութերի արժեքը:

Խորհրդակցություն և պլանավորում

- Վերաբնակեցման պլանները կմշակվեն և կիրականացվեն՝ խորհրդակցելով ԾԱԿ-երի հետ: Վերաբնակեցման տարածքում կստեղծվեն և կբարելավվեն համայնքային ենթակառուցվածքներ և ծառայություններ, որպեսզի նշված ծառայությունները հասանելի լինեն ԾԱԿ-երին:
- Կիրականացվեն վերաբնակեցման և վերականգնման միջոցառումների նախագծման, պլանավորման և իրականացման արդյունավետ ու ժամանակին աշխատանքներ՝ ԾԱԿ-երի համար անհարկի ուշացումներից և հետևանքներից խուսափելու նպատակով:

Վերատեղակայում

- ԾԱԿ-երին կտրամադրվի լիարժեք աջակցություն անձնական իրերի, տնային գույքի և վերաօգտագործման ենթակա նյութերի փոխադրման համար: Ավելին, տների, հողերի և այլ գույքի դիմաց փոխարինման արժեքով հաշվարկվող փոխհատուցումից բացի, նրանց կտրվի վերաբնակեցման գծով նպաստ:
- Համայնքային ենթակառուցվածքների, օր.՝ դպրոցների, գործարանների, ջրամատակարարման աղբյուրների, ճանապարհների, կոյուղու, էլեկտրաէներգիայի մատակարարման կամ համայնքային այլ ռեսուրսների, օր.՝ անտառային կամ արոտային տարածքների կորստի դեպքում վերջիններիս փոխարինման համար համայնքից ծախսեր չեն պահանջվի:

⁹ Որպես ընդհանուր սկզբունք՝ սա վերաբերում է այն դեպքերին, երբ ընդհանուր արտադրական տարածքի համեմատ վերցված հողը 20 տոկոսից պակաս է: Տես նաև ՀԲ-ի «ՕՔ 4.12»-ի, 12-րդ կետի 17-րդ ծանոթագրությունը:

Ժամկետները

- ԾԱԿ-երի վերաբնակեցման, փոխհատուցման և վերականգնման ծրագրերի ժամկետները պետք է սահմանվեն այնպես, որ երաշխավորվի նոր հողի և բնակության վայերի առկայությունը նախքան ծրագրի կամ նրա ենթաբաղադրիչի հետ կապված շինարարական աշխատանքների սկիզբը:
- Հողի մաքրումը չի սկսվի, քանի դեռ ԾԱԿ-երը չեն ստանա փոխհատուցում և վերականգնման գծով աջակցություն:

Մոնիտորինգ

- Կսահմանվեն վերաբնակեցման աշխատանքների ներքին մոնիտորինգի ինստիտուցիոնալ մեխանիզմները: ՎԳԾ-ի կազմման և իրականացման աշխատանքների անկախ մոնիտորինգն ապահովելու նպատակով կներգրավվի արտաքին կազմակերպություն, եթե դա պահանջվում է ՎԳԾ-ով:¹⁰

3.3. Ազդակիր ակտիվների գնահատում

ՎԳԾ-ի կազմման ընթացքում ԱԽՈԵ-ի միջոցների հաշվին ԱՖԾԿԿ-ը կներգրավի ունակ և ճանաչված անկախ գնահատող, որի խնդիրը կլինի որոշել բոլոր համապատասխան հողերի և ակտիվների փոխարինման արժեքը: Գնահատման գործընթացի ժամանակ քննարկումներ կանցկացվեն ԾԱԿ-երի, տեղական պաշտոնյաների և համապատասխան պետական մարմինների (օր.՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի) հետ: Այնուհետև գնահատողի և ԷՆ-ի աջակցությամբ կմշակվեն փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմնվելով կատարված գնահատումների վրա: Հաշվի կառնվեն գնահատման հետևյալ ուղղորդող սկզբունքները.

Փոխարինման արժեքի որոշում

Հողի և շինությունների փոխարինման արժեքը որոշվում է հետևյալ կերպ.

- (i) Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հավասար արտադրական ներուժով կամ օգտագործման նպատակով հողի շուկայական արժեքն է նախքան ծրագրի իրականացումը կամ տեղահանումը (հիմնվելով այս երկուսից ամենաբարձրի վրա)՝ գումարած տվյալ հողակտորը ազդակիր հողին համապատասխան պայմաններով ապահովման հետ կապված ծախսերը՝ գումարած գրանցման և օտարման հարկերի գծով ծախսերը: Ընդ որում, փոխարինվող հողը պետք է գտնվի ազդակիր հողին մոտակա տարածքում:
- (ii) Քաղաքային վայրերում գտնվող հողերի դեպքում՝ հավասար չափսեր ունեցող հողի շուկայական արժեքն է նախքան տեղահանումը և օգտագործումը՝ գումարած գրանցման և

¹⁰Լրացուցիչ մանրամասները տես ստորև բաժին 5.4-ում:

օտարման հարկերի գծով ծախսերը: Ընդ որում, փոխարինվող հողը պետք է ունենա համանման կամ բարելավված հանրային ենթակառուցվածքային հարմարություններ և ծառայություններ և գտնվի ազդակիր հողին մոտակա տարածքում, և

(iii) Տների և այլ շինությունների դեպքում՝ ազդակիր շինության տարածքին և որակին համապատասխանող կամ դրանից ավելի լավ որակ ունեցող փոխարինող շինության կառուցման կամ մասամբ ազդակիր շինության համապատասխան մասի վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի շուկայական արժեքն է՝ գումարած շինարարական նյութերը կառուցման վայր փոխադրելու հետ կապված ծախսերը, գումարած աշխատուժի արժեքը և կապալառուներին կատարվող վճարումները, գումարած գումարած գրանցման և օտարման հարկերի գծով ծախսերը:

ԾԱԿ-երին փոխհատուցման ենթակա փոխարինման արժեքի որոշման ժամանակ հաշվի չի առնվում ակտիվի ամորտիզացիան և վերաօգտագործելի նյութերի արժեքը, ինչպես նաև ծրագրի միջոցով ստացվելիք օգուտների արժեքը՝ հանած ազդակիր ակտիվի գնահատված արժեքից: Եթե երկրի օրենսդրությունը չի համապատասխանում փոխարինման լրիվ արժեքով փոխհատուցման չափանիշին, ապա կկիրառվեն փոխարինման արժեքով փոխհատուցման վերաբերյալ ՀԲ-ի քաղաքականությունները, ուղեցույցները և տեխնիկական մասնագրերը:

Հողի, շինությունների, ձեռնարկությունների, հիմնական բարելավումների և ժամանակավոր այլ ակտիվների դիմաց փոխհատուցումը կհիմնվի շուկայական գնահատման, արտադրողականության գնահատման, համաձայնեցված փոխհաշվարկների, նյութերի և աշխատուժի գնահատման, վերաօգտագործելի նյութերի օտարման արժեքի և կատարված վճարների վրա: Հարկ է նշել, որ սեփականության իրավունքի, լիցենզիայի կամ թույլտվության բացակայությունը հիմք չէ փոխհատուցման չվճարման համար:

Վերականգնման արժեք

Ի լրումն ակտիվների կորստի դիմաց փոխհատուցմանը, ԾԱԿ-երը կարող են ստանալ անցումային աջակցություն, որը ներառում է տեղափոխման ծախսերը, ժամանակավոր կացարանը (անհրաժեշտության դեպքում), աշխատանքային ուսուցումը և աշխատանքի տեղավորմանը նախորդող սպասման ժամանակաշրջանում եկամտային աջակցությունը: ԾԱԿ-երը պետք է ունենան ՀՀ օրենսդրությամբ և վերը պարբերություններում մանրամասն նկարագրված ՀԲ-ի ընթացակարգերով կարգավորվող ամբողջական փոխհատուցում ստանալու հնարավորություն, եթե ազդեցության տևողությունը գերազանցում է երկու տարին: Այս կորուստները կգնահատվեն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները և կներառեն գործարար հնարավորությունների (ժամանակավոր կամ մշտական) կորստից մինչև բերքի, ծառերի և այլնի կորստի դեպքերը:

Ինչ վերաբերում է այն կորուստներին, որոնք դրամական արտահայտությամբ հնարավոր չէ հեշտորեն գնահատել կամ փոխհատուցում տրամադրել (օր.՝ հանրային ծառայությունների, պատվիրատուների և մատակարարների հասանելիություն, կամ ձկնորսության, արոտավայրերի

կամ անտառների հասանելիություն), ապա ջանքեր կգործադրվեն համարժեք և մշակութային առումով ընդունելի ռեսուրսների հասանելիության և եկամուտ վաստակելու հնարավորությունների ապահովման ուղղությամբ:

4. ՎԳԾ-Ի ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ազդակիր մարդկանց հաշվառում և գույքագրում

Տեխնիկա-տնտեսական ուսումնասիրություններն ավարտելուց կարճ ժամանակ անց կսահմանվի և հրապարակավ կհայտարարվի վերջնական ամսաթիվը, և, կիրառելիության դեպքում Ծրագրի կողմից կանցկացվի Ծրագրի բաղադրիչի/ենթաբաղադրիչի ազդակիր ընտանիքների ու անձանց հաշվառում: Վերջինս կընդգրկի յուրաքանչյուր ԾԱԿ-ի բոլոր սպասվող կորուստների ամբողջական գույքագրումը: Այս տեղեկատվությունը առնվազն կներառի. (ա) մարդկանց թիվը, հիմնական զբաղմունքը և եկամտի մակարդակը, (բ) տների թիվը, տեսակը և չափսերը, (գ) տնամերձ բոլոր հողամասերի թիվը, որակը և զբաղեցրած տարածքը, (դ) յուրաքանչյուր ԾԱԿ-ին պատկանող և կորցնելու ենթակա գյուղատնտեսական հողակտորների թիվը, կարգը, տեսակը և զբաղեցրած տարածքը, (ե) գյուղատնտեսական հողերի տիրապետման կարգավիճակը և, կիրառության դեպքում, բնակչի / վարձակալի կողմից վճարվող վարձավճարի չափը, (զ) բացասական ազդեցությանը ենթարկված այլ հիմնական միջոցների քանակը, կատեգորիան և դրանցից ստացվող շահույթի չափը, (է) կորցրած արտադրական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր արտադրական ակտիվներում, (ը) արտադրական ակտիվներին հասցված ժամանակավոր վնասը, (i) բացասական ազդեցությանը ենթարկված ապրուստի ոչ գյուղատնտեսական միջոցների թիվը, կատեգորիան և որակը, (j) ձեռք բերվելիք համայնքային ռեսուրսների քանակությունը, տեսակը և որակը¹¹:

4.2. Կորուստների որոշումը

Եթե ԱԽՈԵ-ի բաղադրիչը/ենթաբաղադրիչը ենթադրում է ԾԱԿ-երի ֆիզիկական տեղաշարժ կամ վերատեղակայման հողերի տրամադրում, ապա տվյալները կհավաքագրվեն տեղում (սրա համար պատասխանատու կլինի ԷՆ-ն և աշխատանքը կիրականացնի ԾԻԳ-ի և/կամ պաշտոնական հետազոտությունների, նախնական ուսումնասիրության միջոցով և կներկայացնի առաջարկություններ՝ համագործակցելով գործընթացում ընդգրկված բոլոր հաստատությունների, գործակալությունների և կազմակերպությունների հետ): Ջանքեր կգործադրվեն, որպեսզի ապահովվի այն, որ վերատեղակայման վայրը կամ փոխարինող հողատարածքը գտնվի ԾԱԿ-երի նախկին տեղակայման վայրին մոտակա տարածքում՝ սոցիալական միջավայրից ԾԱԿ-երին հանելուց և նրանց տնտեսական ապրելակերպի ոչ իրատեսական բաժանումից խուսափելու նպատակով¹²:

¹¹ Տես նաև (i) **Հավելված 2.** Հաշվառման տեղեկատվության ստուգաթերթիկ, և (ii) **Հավելված 3.** Տվյալների ցանկ Հաշվառման հետազոտության համար

¹² Տես նաև **Հավելված 4.** Կորուստների գույքագրման տվյալների ցանկ

4.3. Հիմնական հետազոտություն

Ի լրումն ազդակիր հողերի և ակտիվների հաշվառմանը և գույքագրմանը, ԾԱԿ-երի վերատեղակայում պահանջող բաղադրիչները / ենթաբաղադրիչները կարող են ներառել ՎԳԾ-ի շրջանակում բնակչության շրջանում անցկացվելիք հիմնական հետազոտություն¹³: Հիմնական հետազոտության միջոցով կատարվեն տվյալներ ծրագրի տարածքում, ինչպես նաև վերաբնակեցման առաջարկվող վայրում (եթե կիրառելի է) գոյություն ունեցող սոցիալական կառուցվածքի, սեփականատիրության մեխանիզմների, տարբեր սոցիալական խմբերի կողմից ռեսուրսների օգտագործման, համատեղ օգտագործման ռեսուրսների հասանելիության, սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների մասին, հստակորեն կորոշվեն բոլոր հատուկ շահագրգիռ խմբերը, հատկապես նրանք, ովքեր կարիքավոր են և խոցելի (օր.՝ վարձակալող բնակիչներ, հողագուրկ աշխատողներ և տնային տնտեսություններ, որտեղ գլխավոր անդամը կին է), ինչպես նաև կնկարագրվի նրանց հատուկ բնորոշ կապը ծրագրի հետ¹⁴:

5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

5.1 ՎԳԾ-ի մշակման և հաստատման գործընթաց

ՎԳԾ-ները, ըստ անհրաժեշտության, մշակվելու են ԾԻԳ-ի կողմից՝ վերջինիս կողմից վարձված և ԷՆ-ի կողմից վերահսկվող խորհրդականների օժանդակությամբ (եթե այդպիսիք առկա են): ԷՆ-ը ընդհանուր պատասխանատվություն է կրելու ՎԳԾ-ի կազմման և վերահսկողության համար: ՎԳԾ-ի կազմման գործընթացը կսկսվի վերջնական ժամկետի հայտարարման պահից անմիջապես հետո, իսկ ձեռնարկվելիք հիմնական աշխատանքները ներառելու են, սակայն չեն սահմանափակվելու հետևյալով.

- ԾԱԿ-երի որոշում և նրանց հետ խորհրդակցում,
- հաշվառման հետազոտություն և ԾԱԿ-երի կորուստների հաշվառում;
- կորցրած հողերի և ակտիվների գնահատում;
- փոխհատուցման մատրիցի մշակում;
- կողմնորոշիչ բյուջեի և իրականացման ժամանակացույցի կազմում:

ՎԳԾ(ներ)-ի նախագիծը և վերջնական տարբերակը ԷՆ-ը կներկայացնի ՀԲ-ի հաստատմանը և բացահայտմանը:

5.2 Վերաբնակեցման գործողությունների ծրագրերի կազմման և հաստատման գործընթացը

¹³ Եթե պահանջվում է ամբողջական ՎԳԾ, ապա հիմնական հետազոտության անցկացումը պարտադիր է: Կրճատված ՎԳԾ-ի պարագայում հիմնական հետազոտությունը անցկացվում է այն դեպքում, երբ ԾԱԿ-երի ֆիզիկական վերատեղակայումը անխուսափելի է և/կամ որոշ ԾԱԿ-եր կորցնում են իրենց արտադրական ակտիվների ավելի քան 10%-ը (տես նաև «ՕՔ 4.12»-ի Հավելված Ա-ի 6-րդ ծանոթագրությունը)

¹⁴ Տես նաև **Հավելված 6**. Տվյալներ հիմնական հետազոտության համար

Ընդհանուր նկարագիրը

Սույն ՎՔՇ-ն ուղղորդում է Վերաբնակեցման գոծողությունների ծրագրի (ՎԳԾ) կազմման գործընթացը: Ըստ առանձին բաղադրիչների / ենթաբաղադրիչների կազմված ՎԳԾ-ները, որոնք համահունչ են ՎՔՇ-ին, կներկայացվեն ՀԲ-ի հաստատմանը որոշակի ծրագրային տեղեկությունների տրամադրումից հետո:

ԷՆ-ը, ըստ անհրաժեշտության, կվերանայի ՎԳԾ-ները և դրանք կներկայացնի ՀԲ-ի հաստատմանը: Այդ աշխատանքների իրականացման ընթացքում ԷՆ-ը պատասխանատվություն է կրելու աշխատանքների կատարման համար:

ՎՔՇ-ի շրջանակում ըստ առանձին բաղադրիչների կազմված ՎԳԾ-ները ներառելու են հաշվառման և սոցիալ-տնտեսական հետազոտության վերաբերյալ հիմնական տեղեկությունները, փոխհատուցման կոնկրետ դրույքաչափերը և չափորոշիչները, քաղաքականությամբ սահմանված իրավունքները, որոնք վերաբերում են հաշվառման հետազոտության արդյունքում որոշված լրացուցիչ ազդեցություններին, ինչպես նաև վերաբնակեցման վայրերի նկարագրությունը, կենսամակարդակի և ապրուստի բարելավման կամ վերականգնման ծրագրերը, վերաբնակեցման աշխատանքների իրականացման ժամանակացույցը, ինչպես նաև ծախսերի մանրամասն նախահաշիվը: Առաջադրանքները կատարելու ընթացքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի տեղահանված անձանց շրջանում խոցելի խմբերի, և հատկապես աղքատության շեմից ցածր գտնվող, հողագուրկ անձանց, հաշմանդամների, ծերերի, կանանց և երեխաների, տեղացի բնակչության, ազգային փոքրամասնությունների կամ այլ տեղահանված անձանց կարիքներին, ովքեր կարող են պաշտպանված չլինել հողի / գույքի փոխհատուցման մասին ազգային օրենսդրությամբ:

ՀՀ օրենսդրությամբ հավասարապես պաշտպանվում են հասարակության բոլոր, այդ թվում խոցելի համարվող խմբերը: Սույն սկզբունքը արտացոլված է ՀՀ սահմանադրության մեջ: Մասնավորապես, Սահմանադրության 14.1 հոդվածը սահմանում է հետևյալը. բոլոր անձինք հավասար են օրենքի առջև: Արգելվում է սեռի, ռասայի, ազգային պատկանելության, քաղաքական կամ այլ տեսակետների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային կարգավիճակի, ծննդյան, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքներով պայմանավորված խտրականությունը:

Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությունը գերակա օրենսդրական ուժ ունի և Սահմանադրության նորմերը ուղղակիորեն ենթակա են կատարման: Բոլոր օրենքները և մյուս ենթաօրենսդրական ակտերը պետք է համահունչ լինեն Սահմանադրությանը:

Վերաբնակեցման գործողությունների ծրագիր

Համաձայն ՀԲ-ի «ՕՔ4.12»-ի, վերաբնակեցման հանգեցնող բոլոր նախագծերը պետք է ՎԳԾ ունենան: Վերաբնակեցման ծրագրի մանրամասնության շրջանակն ու մակարդակը տարբեր է՝ կախված

վերաբնակեցման ծավալներից և բարդության աստիճանից, այն է՝ լիարժեք ՎԳԾ է պահանջվում այն դեպքում, երբ նախագծով հողի ձեռքբերումը ազդում է ավելի քան 200 մարդու վրա, ընդգրկում ավելի քան 10 տոկոս հողի ձեռքբերում և ենթադրում բնակչության ֆիզիկական վերաբնակեցում: Կրճատված ՎԳԾ -ն ընդունելի է, եթե վերաբնակեցվում է 200 պակաս մարդ: Նույնիսկ եթե ազդեցության գոտում են հայտնվել ավելի քան 200 մարդ, և եթե հողի ձեռքբերումը զգալի չէ (10 տոկոսից պակաս հողի ձեռքբերում) և չի ենթադրում մարդկանց ֆիզիկական վերաբնակեցում, ընդունելի է կրճատված ՎԳԾ-ն: Եթե վերաբնակեցվում է 200 պակաս մարդ, բայց որոշ ֆիզիկական վերատեղակայում է ենթադրվում, ապա կրճատված ՎԳԾ-ն ընդլայնվում է, ներառելով վերականգնողական ծրագիրը: Ամփոփ նկարագիրը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Ենթաբաղադրիչների դասակարգման և վերաբնակեցման ծրագրման պահանջները

Կատեգորիա	Ազդակիր մարդկանց թիվը	Վերաբնակեցման ազդեցությունը	Պլանավորման պահանջ
Ա	200-ից ավելի մարդ հայտնվում է մեծ ազդեցությունների գոտում, որն արտահայտում է որպես՝ <ul style="list-style-type: none"> • ֆիզիկական վերաբնակեցում և/կամ • նրանց արտադրական ակտիվների ավելի քան 10% կորուստ 	Զգալի	Ամբողջական ՎԳԾ
Բ	200-ից պակաս ազդակիր մարդ	Փոքր	Կրճատված ՎԳԾ
Գ	Չկա ակտիվների և եկամտի կորուստ, կամ վերաբնակեցման կարիք չկա	Չկա	Չկա

Անհրաժեշտության դեպքում ամբողջական կամ կրճատված ՎԳԾ-ն ըստ առանձին բաղադրիչների/ենթաբաղադրիչների մշակվելու է ԾԻԳ-ի և վերահսկվելու էՆ-ի կողմից: ՎԳԾ-ներում մանրամասն ներկայացվելու է վերաբնակեցման , այդ թվում՝ ակտիվների ձեռքբերման, փոխհատուցման, վերատեղակայման և վերականգնման մեխանիզմների իրագործումը: Բոլոր ԾԱԿ-երի ակտիվների, ապրուստի աղբյուրների և կորուստների հաշվառման հետազոտությունը կկազմվի անմիջապես այն բանից հետո, երբ համապատասխան պետական մարմինը հրապարակի ԾԱԿ-ի որոշման վերջնական ամսաթիվը:

Կազմված յուրաքանչյուր ՎԳԾ-ն կներկայացվի էՆ-ի կողմից ՀԲ-ի հաստատմանը: Հաստատումից հետո կնախաձեռնվեն փոխհատուցման, վերաբնակեցման և վերականգնման աշխատանքները, որոնք կավարտվեն նախքան ԱԽՈԵ-ի յուրաքանչյուր բաղադրիչի/ենթաբաղադրիչի գծով քաղաքացիական աշխատանքների պայմանագրերի կնքումը:

Վերաբնակեցման ուսումնասիրություն

ԱԽՈԵ-ի նախագծի 2.3 ենթաբաղադրիչը ուղղված է ամրապնդելու ՊՄԳ ոլորտային խմբերը՝ ֆինանսավորելով i) ոլորտային նախաձեռնությունները, որոնք կբարելավեն տվյալ ճյուղի ընդհանուր մրցունակությունը, օրինակ՝ ճյուղային բրենդի և շուկայավարման ռազմավարության մշակումը և ii) տվյալ ճյուղի համար առանձնահատուկ ենթակառուցվածքները, որոնք անհատական ֆիրմաների համար անթույլատրելիորեն թանկ են, և որի նպատակն է քանակի միջոցով ինայտություն ապահովել և բարելավել արտադրողականությունը, օր.՝ որակի և թեստավորման լաբորատորիաների, ուսումնական կենտրոնների և ընդհանուր նյութատեխնիկական ենթակառուցվածքի միջոցով: Այս գործիքները կֆինանսավորվեն կառավարության և մասնավոր հատվածի մասնակիցների միջև պայմանագրերի միջոցով, որը կդառնա ոլորտային կոնսորցիում 50/50 բաժնեմասնակցությամբ:

Մի քանի ոլորտներ ցանկություն են հայտնել զարգացնելու ՊՄԳ ոլորտային խմբերը: Առաջին հավանական մասնակիցներից են՝ i) նախագծա-ճարտարագիտական ոլորտը, որն առաջարկել է ուսուցման և թեստավորման կառույց ստեղծել և ii) գինեգործական ճյուղը առաջարկել է մի ծրար, որում ընդգրկված են թեստավորման և շշալցման լաբորատորիան՝ ՎԳԾ-ների բազմազանությունը և փաթեթավորումը բարելավելու, ճյուղի բրենդինգի ռազմավարությունը մշակելու, ինչպես նաև նյութատեխնիկական մատակարարմանը փորձագիտական օժանդակություն ցույց տալու նպատակով: Չնայած նրան, որ դոլարային սահմանափակումներ չկան (ընտրող հանձնաժողովը որոշելու է առաջարկների կենսունակությունը), նախատեսվում է, որ ՊՄԳ ոլորտային խմբերի զարգացման գծով կֆինանսավորվեն մինչև 4 նախագծեր, յուրաքանչյուրը մոտ 2 միլիոն դոլար արժողությամբ:

Սույն ենթաբաղադրիչի գծով հնարավոր վերաբնակեցման որոշման և արդյունքների ապահովման նպատակով նախագծի շրջանակներում կնախաձեռնվի նախնական ուսումնասիրություն, ներառյալ հետևյալ քայլերը.

1. ԾԻԳ-ը ԱԽՈԵ-ի բաղադրիչների/ենթաբաղադրիչների գծով ներկայացնում է առկա հիմնական իրավիճակի սկզբնական և փաստաթղթավորված նկարագրություն, այդ թվում՝ կապված վերաբնակեցման, բաղադրիչի/ենթաբաղադրիչի համար պահանջվող հողի (մշտական կամ ժամանակավոր), և ազդակիր հողի սեփականության որոշման և քարտեզագրման հետ,
2. Ավարտելուց հետո տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունները/նախագծերը ուսումնասիրվելու են ԷՆ-ի և ՀԲ-ի կողմից՝ ըստ անհրաժեշտության: Հավանական ազդեցությունները որոշվելու և վերահսկվելու են ԾԻԳ-ի, և անհրաժեշտության դեպքում, ԷՆ-ի կողմից ակնկալվող ազդեցությունների վայր այցելությունների միջոցով,
3. Այցերը ներառում են. (i) տեղական մարմինների հետ սկզբնական քննարկումները, (ii) ԾԻԳ-ի կողմից ներկայացված տեղեկությունների ստուգում անհրաժեշտության կամ երաշխավորության դեպքում, (iii) հավանական ազդեցության ծավալների կամ չափերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների հայթայթում,

4. Այս ձևով հաստատված ցանկացած ենթաբաղադրիչի գծով, որը ենթադրում է հավանական վերաբնակեցման կամ վերաբնակեցման ազդեցություն, հետագայում կազմվում է ժամանակացույց զգայունակության որոշման և պոտենցիալ ազդակիր համայնքների ներգրավմամբ խորհրդակցությունների անցկացման նպատակով,
5. Խորհրդակցությունների անցկացման գործընթացը պատշաճորեն փաստաթղթավորվում է ԾԻԳ-ի կողմից, իսկ արդյունքները ներկայացվում են ԷՆ-ին՝ հետագա մշակման և տվյալ կոնկրետ բաղադրիչի/ենթաբաղադրիչի գծով աշխատանքների շարունակման գործընթացի (կամ այլ գործողության) վերջնական հաստատման համար,
6. Եթե աշխատանքների շարունակման հաստատումը ստացվել է և համապատասխանության վերջնական ամսաթիվը հայտարարվել, ապա ԾԱԿ-ը և այլ տեղական մարմինները ծանուցվում են նախատեսված փոխհատուցման և վերաբնակեցման մասին,
7. Այնուհետև ձեռնարկվում է ՎԳԾ-ի անբաժանելի մաս կազմող ԾԱԿ-երի հաշվառման հետազոտությունը, որը զուգակցվում է կորուստների հաշվառման հետ՝ ԾԱԿ-երին հասցված անհարմարությունները սահմանափակելու և ՎԳԾ-ի կազմման գործընթացը արագացնելու նպատակով: Միաժամանակ, ըստ անհրաժեշտության, նախաձեռնվում է նաև իրավիճակի հիմնական հետազոտությունը,
8. Հետազոտության գործիքների սահմանումից և վերջնական որոշումից հետո կայացվում է որոշում, թե արդյոք տվյալ բացադրիչի/ենթաբաղադրիչի համար ՎԳԾ (կրճատված կամ ամբողջական՝ ըստ կիրառության) պետք է մշակվի ԾԻԳ-ի կողմից, թե բավարար է միայն Պատշաճ ուսումնասիրությունը,
9. Եթե ՎԳԾ(ներ) է պահանջվում, ապա պետք է կիրառվեն Հավելված 5-ում բերված ձևերը: Բավարար մանրամասներ պետք է ներկայացվեն և ՎԳԾ-ն պետք է համահունչ լինի սույն RPF-ին (սկզբունքներին):

5.3 ՎԳԾ-ի իրականացման գործընթացը

ՎԳԾ-ում նշվող բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն վարկային միջոցների և/կամ ՀՀ բյուջեի հաշվին և ավարտվեն նախքան շինարարական աշխատանքների սկիզբը: ԾԻԳ-ը պատասխանատու կլինի հաստատված ՎԳԾ-ները ԷՆ-ի և ՀԲ-ի վերահսկողության ներքո իրականացնելու համար:

Իրականացման հետ կապված հիմնական պարտականությունները և աշխատանքները ներառում են, բայց կարող են չսահմանափակվել հետևյալով.

- 1) Սահմանազատված հողատարածքում ՎԳԾ-ի հաշվառման և ակտիվների գույքագրման տվյալների ստուգաճշտում,
- 2) Կադաստրային և տեղագրական հետազոտությունների անցկացում և նախագծի հնարավոր փոփոխություններով պայմանավորված չափումների ու գույքագրման տվյալների ճշտության ապահովում,
- 3) Մերտ խորհրդակցությունների վարում ԾԱԿ-երի և գյուղի առաջնորդների հետ,
- 4) Նոր հողակտորների գրանցման համար փաստաթղթերի պատրաստում,
- 5) Անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում հանրությանը և վերաբնակեցման հարցերի

- վերաբերյալ բոլոր ազդակիր համայնքների (այլ ոչ միայն ԾԱԿ-երի) հետ իրազեկման և հաղորդակցման թափանցիկ աշխատանքների ժամանակին անցկացում,
- 6) Բանակցություններ և համաձայնության ձեռք բերում ԾԱԿ-երի հետ,
 - 7) Փոխհատուցման տրամադրում և անհրաժեշտության դեպքում վերականգնման միջոցառումների իրականացում և վերահսկողություն: Դրամական փոխհատուցումները կտրամադրվեն չեկերի կամ բանկային փոխանցումների միջոցով (ԾԱԿ-երի հայեցողությամբ),
 - 8) Բողոքարկման ընթացակարգերի կիրառում,
 - 9) Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վիճելի հարցերի կարգավորում դատական կարգով,
 - 10) Անհրաժեշտության դեպքում սեփականազրկման վարույթի իրականացում դատական կարգով,
 - 11) Ենթակառուցվածքների կառուցում (վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում) և ԾԱԿ-երի վերատեղակայման մեխանիզմներ,
 - 12) ՎԳԾ-ի ավարտման հաշվետվության կազմում:

Հարկ է ընդգծել, որ ՎԳԾ-ի գոհացուցիչ ավարտը ծրագրի բաղադրիչի / ենթաբաղադրիչի շրջանակում (ֆիզիկական) աշխատանքները սկսելու պայմաններից մեկն է:

Հողի ձեռքբերման ընթացակարգը

Մասնավոր հողերի ձեռքբերման ընթացակարգը պահանջում է հետևյալ հինգ հիմնական հաջորդական աշխատանքների իրականացում.

- 1) ԾԱԿ-ի կողմից հողի սեփականատիրության որոշում,
- 2) Սեփականատիրության օրինականացման նպատակով ազդակիր հողակտորների գրանցում,
- 3) Տեղեկատվության փոխանակում հնարավոր ԾԱԿ-երի հետ՝ հողի ձեռքբերման գործընթացում մասնակցությունից հրաժարվելու իրենց իրավունքի ըմբռնումն ապահովելու նպատակով,
- 4) Համապատասխան ԾԱԿ-ի և ՀՀ Կառավարության կողմից լիազորված մարմնի միջև հողի գնման պայմանագրի կնքում,
- 5) Օտարման ենթակա հողակտորների սահմանազատում և գրանցում,
- 6) Փոխհատուցման վճարում:

Բողոքներ և վիճելի հարցեր

Բողոքների քննության աշխատանքային խումբ. առաջադրանքները և կազմը

Նախքան վերաբնակեցման հետ կապված վիճելի հարցերը դատարան ներկայացնելը դրանք քննելու նպատակով ծրագրի մակարդակում կստեղծվի Վիճելի հարցերի քննության աշխատանքային խումբ: Նշված խմբի կազմում կընգրկվեն ներկայացուցիչներ ԷՆ-ից, ԱՖԾԿԿ-ից և այլ համապատասխան պետական մարմիններից և/կամ համապատասխան Մարզպետարանից, տեղական հասարակական կազմակերպություններից (ՀԿ-ներ) և ԱԽՈԵ-ի կոնկրետ բաղադրիչի /ենթաբաղադրիչի ազդակիր համայնքներից: Վիճելի հարցերի քննության աշխատանքային խմբի նիստերը կգումարվեն ԷՆ-ի կողմից ըստ անհրաժեշտության՝ վերաբնակեցման հետ կապված բողոքների և վիճելի հարցերի լսման նպատակով:

Ստեղծման ամսաթվին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում Վիճելի հարցերի քննության հանձնաժողովը պետք է Էկոնոմիկայի նախարարին ներկայացնի իր աշխատակարգը և

գործունեության մեխանիզմները: Աշխատակարգը պետք է հստակորեն սահմանի բողոքների ուղարկման և դրանք կարգավորման մեխանիզմներն ու կանոնները, ներառյալ վիճելի հարցերի ներկայացման մեխանիզմները, ինչպես նաև կենտրոնական ու տեղական մակարդակներում պատասխանատու պաշտոնյաների հասցեները և անուն, ազգանունները: Աշխատակարգը պետք է ապահովի առավելագույն հասանելիություն, թափանցիկություն, բացահայտում և մասնակցություն և այն ուղղված կլինի ազդակիր բնակչության շահերի առավելագույն պաշտպանությանը: Այս նպատակներն իրագործելու համար Աշխատանքային խումբը պետք է ներգրավի ՋԼՄ-ներին, օգտագործի ԷՆ-ի և այլ շահագրգիռ կառույցների պաշտոնական կայքերը, թեժ գծերը և ՏՏ համակարգերը, ԷՆ-ի ենթակայության տակ գործող կազմակերպությունների, տարածքային գրասենյակների, համայնքների և ՏԻՄ-երի կարողությունները՝ ակտիվորեն համագործակցելով ՀԿ-ների հետ: Աշխատակարգի հաստատումից հետո այն պետք է հրապարակվի ՋԼՄ-ներում և ծրագրի գործողության ողջ ընթացքում հասանելի լինի ԷՆ-ի պաշտոնական կայքում (www.mineconomy.am):

Ընթացակարգը

ՀԲ-ի վերահսկողության ներքո ԾԻԳ-ը բոլոր ջանքերը կգործադրի ՎԳԾ-ի շրջանակում վերաբնակեցման առնչությամբ բացահայտված բոլոր հարցերը բաղադրիչի/ենթաբաղադրիչի մակարդակում բարեկամաբար լուծելու ուղղությամբ: Եթե նշված ջանքերը չպսակվեն հաջողությամբ, ապա ԾԱԿ-ը կարող է սեփական հայեցողությամբ բողոք ներկայացնել դատարան կամ Վիճելի հարցերի քննության աշխատանքային խմբին: Վիճելի հարցերի քննության առաջարկվող ընթացակարգը և մեխանիզմները կներկայացվեն ԾԱԿ-երին և կքննարկվեն վերջիններիս հետ ՎԳԾ-ի կազմման վաղ փուլերում: Բոլոր պոտենցիալ ԾԱԿ-երից բողոքները արդյունավետորեն ստանալու համար կարող է ստեղծվել ժամանակավոր հատուկ վայր՝ բողոքները ժամանակին ներկայացնելու և ստանալու նպատակով: ԾԱԿ-երը կարող են բողոքը ներկայացնել բանավոր (որը պետք է պատշաճորեն գրավոր արձանագրվի հատուկ վայրում բողոքի ներկայացման պահին) կամ գրավոր ձևով: Այս հարցերը կարգավորվում են ազգային օրենսդրությամբ: Բողոքարկող կողմը կարող է հետևել բողոքի կարգավորման ընթացքին՝ օգտվելով ստացված հատուկ ծածկագրից:

Պատասխանը կտրվի բողոքը ստանալուն հաջորդող երկու շաբաթվա ընթացքում: Եթե հարցը լուծում չի ստանում Վիճելի հարցերի քննության աշխատանքային խմբի մակարդակում, ապա բողոքարկողի կամ վերը աշխատանքային խմբի կողմից այն կարող է ներկայացվել դատարան: Սրա համար պահանջվող ցանկացած վճարները կկատարվեն Ծրագրի կողմից այն բանից հետո, երբ կստուգվի, որ տվյալ ԾԱԿ-ը հանդիսանում է ՀՀ Կառավարության Ընտանեկան աջակցության ծրագրի շահառու¹⁵: Բոլոր մնացած դեպքերում համապատասխան ծախսերը կատարվում են ԾԱԿ-երի հաշվին:

Սեփականագրկման վարույթը

¹⁵Այս ծրագիրը, որը հիմնվում է ունեցվածքի և եկամտի մի շարք ցուցանիշների վրա, տարբեր չափերի աջակցություն է տրամադրում այն ընտանիքներին, որոնք ի վիճակի չեն լիովին կամ մասամբ հոգալ իրենց ամենօրյա կարիքները:

Մասնավոր գույքի ձեռքբերման շուրջ ԾԻԳ-ի և ԾԱԿ-ի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ՀՀ Կառավարությունը կնախաձեռնի սեփականազրկման վարույթը համաձայն «Մոնիալական / հանրային և պետական կարիքների համար գույքի օտարման մասին» օրենքի (ՀՕ - 185-Ն, 2006թ. նոյեմբերի 27):

Դատարան

ՀՀ դատարանը հանդես կգա ՎԳԾ-ի իրականացման առնչությամբ հարցերի և խնդիրների կարգավորման վերջին աստյանը: Մասնավոր գույքի ձեռքբերման շուրջ ԾԻԳ-ի և ԾԱԿ-ի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ՀՀ Կառավարությունը, ելնելով օրենքով նախատեսված սեփականազրկման իրավունքից, դատարան կդիմի սեփականազրկման հայտով: Հայտը բավարարելուց և սահմանված ընթացակարգերից հետո ՀՀ Կառավարությունը կատանա սեփականազրկման իրավունքը, և համապատասխան գույքը կանցնի պետությանը:

Եթե ՎԳԾ-ի իրականացման և փոխհատուցման հետ կապված բողոքները և վիճելի հարցերը բարեկամաբար չեն կարգավորվում, իսկ Վիճելի հարցերի քննության հանձնաժողովի միջնորդությունը չի բավարարվում, ապա ԾԱԿ-ը ևս կարող է հայցադիմում ներկայացնել դատարան: Դատարանի որոշումը վերջնական է և ենթակա է կատարման:

«Մոնիալական / հանրային և պետական կարիքների համար գույքի օտարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, գույքը ձեռք բերող կողմը պարտավոր է դիմել դատարան, եթե օտարման պայմանագիրը կամավոր չի ստորագրվում օտարման ենթակա գույքի սեփականատիրոջ և/կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքներ ունեցող անձանց կողմից, քանի որ դատարանում կարող են լսվել միայն փոխհատուցման գումարների հետ կապված հարցերը: Ուստի, ԾԱԿ-երը չեն կարող սեփական նախաձեռնությամբ դատարանում վիճարկել փոխհատուցման գումարը: Եթե նրանք չեն համաձայնում առաջարկվող գումարներին, ապա չեն ստորագրում օտարման պայմանագիրը, որի դեպքում գույքը ձեռք բերող կողմը պետք է դիմի դատարան, եթե ցանկանում է, որ գույքը օտարվի:

5.4 Վերահսկողություն և մոնիտորինգ

Վերաբնակեցման աշխատանքների բոլոր բաղադրիչների / ենթաբաղադրիչների գծով պարբերաբար վերահսկողություն և մոնիտորինգ է իրականացվելու ԷՆ-ի կողմից: Ներքին մոնիտորինգի հաշվետվությունները ԷՆ-ի կողմից կազմվելու են երկու տարին մեկ անգամ, և յուրաքանչյուր ՎԳԾ-ի ավարտին ՎԳԾ-ի ավարտի մասին (ԷՆ-ի կողմից կազմված) հաշվետվություն է ներկայացվելու Նախագծի կառավարման խորհրդին և ՀԲ-ին: Ներքին մոնիտորինգի և վերահսկողության ընթացքում բացահայտվում է հետևյալը.

- 1) Ստուգվում է, թե արդյոք բոլոր ՎԳԾ-ների գծով հետազոտություն է անցկացվել,
- 2) Արդյոք համապատասխան պահանջի դեպքում կազմվել է ՎԳԾ-ը և կատարվել է առանձին ծրագրերի կամ ենթաբաղադրիչների գծով հիմնական հետազոտությունը (ըստ

անհրաժեշտության),

- 3) Արդյոք գույքի գնահատումը և վերաբնակեցումն իրականացվել է սույն ՎՔԾ-ի և համապատասխան ՎԳԾ-ի դրույթների համաձայն,
- 4) Վերահսկվում է, թե արդյոք վերաբնակեցման բոլոր միջոցառումները իրականացվել են ըստ հաստատված ծրագրի,
- 5) Ապահովում է, որ վերաբնակեցման աշխատանքների իրականացման համար նախատեսված միջոցները ժամանակին հատկացվեն և բավարար լինեն այդ նպատակների իրագործման համար, ինչպես նաև պարզում է, թե արդյոք միջոցները ծախսվում են սույն ՎՔԾ-ի դրույթներին և տվյալ ՎԳԾ-ին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում ՎԳԾ-ում կներգրավվի արտաքին մոնիտորինգի խումբ, որը կանցկացնի վերաբնակեցման աշխատանքների անկախ մոնիտորինգը: Ներքին մոնիտորինգի ստորաբաժանման հաշվետվության ստուգմանը զուգահեռ, արտաքին մոնիտորինգի խումբը կատարելու է հետևյալը.

- 1) ՎԳԾ-ների շրջանակում իրականացվող վերաբնակեցման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում,
- 2) ԾԱԿ-երի եկամուտների մակարդակի և կենսամակարդակի բարելավման կամ գոնե վերականգնման նպատակի իրագործման ստուգում, և, անհրաժեշտության դեպքում, վերաբնակեցման իրականացման առումով առաջարկությունների ներկայացում, որի նպատակն է ապահովել սույն ՎՔԾ-ում և համապատասխան ՎԳԾ-ներում սահմանված սկզբունքների և նպատակների իրագործումը:

6 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական աշխատանքների իրականացման կոնկրետ վայրերը դեռևս հայտնի չեն, և այդ պատճառով առանձին վայրերի ՎԳԾ-երը դեռ չեն կազմվել: Ինչևէ, սույն ՎՔԾ-ն ներկայացնում է այն պայմանները, որոնց ներքո ԱԽՈԵ-ի իրականացման նպատակով կմշակվեն ՎԳԾ-ները: Նման դեպքերում ԷՆ-ն կնախաձեռնի ՎԳԾ-ի մշակումը ՀԲ-ի պահանջներին համապատասխան՝ ստորև նկարագրվող մեխանիզմների հիման վրա ՎԳԾ-ի մշակման բոլոր փուլերում ապահովելով պոտենցիալ շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

ԾԱԿ-երը կմասնակցեն վերաբնակեցման և հողերի ձեռքբերման հետ կապված աշխատանքների մշակմանը և իրականացմանը: ԾԻԳ-ը և ԷՆ-ն քննարկումներ կունենան ԾԱԿ-երի հետ և կիրավիրեն նրանց մասնակցելու գործընթացի վաղ փուլերում ԾԻԳ-ի/ԷՆ-ի կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին, ինչպես նաև նախորդ բաժիններում նկարագրված հանրային քննարկումներին և ՎԳԾ-ի իրականացմանը: ԾԱԿ-երին կտարամադրվի ծրագրի, նրա ազդեցությունների և դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող ռազմավարությունների, տնտեսական վերականգնման աշխատանքների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն: Հանրությանը ներկայացվող և յուրաքանչյուր ազդակիր տնային տնտեսությանը տրամադրվող տեղեկատվությունը կներառի նաև

վերջնական ամսաթիվը, իրավունակության չափանիշները և իրավունքները, փոխհատուցման ձևերը, բողոքների և վիճելի հարցերի կարգավորման ընթացակարգերը: Այս տեղեկատվությունը անվճար հասանելի կլինի հանրությանը, ԾԱԿ-երին, իսկ տեղեկատվության հրապարակման աղբյուրը ևս պարբերաբար կհայտարարվի (օր.՝ ամենամեծ տիրաժ ունեցող տեղական թերթի կիրակնօրյա թողարկումներում հայտարարության զետեղում առնվազն մեկ ամսվա ընթացքում, տեղեկատվության տարածում մարզային և/կամ համայնքային մարմինների միջոցով և այլն): Ազդակիր կողմերին հնարավորություն կտրվի ներկայացնելու իրենց գաղափարները և առաջարկությունները, որոնք հաշվի կառնվեն վերաբնակեցման աշխատանքների պլանավորման և իրականացման ժամանակ: Սա կարվի մի շարք մասնակցային գործընթացների և ԾԱԿ-երի հետ թիրախային քննարկումների միջոցով՝ դրանով իսկ ապահովելով ազդակիր կողմերի շահագրգռվածությունը գործընթացի արդյունքներում: Խորհրդակցային բոլոր քննարկումները կփաստաթղթավորվեն և կպահվեն ԱՏԾԿԿ-ի և ԷՆ-ի կողմից:

ԾԱԿ-երը կարող են նաև ներգրավվել ստեղծվելիք հանձնաժողովներում, ինչը կապահովի ՎԳԾ-ի գործընթացի տարբեր փուլերում (նախապատրաստում և իրականացում) որոշումների կայացման մեջ նրանց մասնակցությունը:

Յուրաքանչյուր ՎԳԾ-ի ավարտից հետո ԾԻԳ-ի կողմից կանցկացվի հակրիճ հետազոտություն ԾԱԿ-երի շրջանում՝ ՎԳԾ-ի գործընթացի և արդյունքներից նրանց բավարարվածության աստիճանը գնահատելու նպատակով: Հետազոտությունների արդյունքում քաղված դասերը կներառվեն հետագա ՎԳԾ(ներ)-ում:

7 ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐ

Վերջնականորեն սահմանված ՎԳԾ-երի հիման վրա ԷՆ-ն Համաշխարհային բանկին կներկայացնի վերաբնակեցման մանրամասն ծախսերը ըստ գյուղատնտեսական հողերի, բնակելի հողերի, տների, այլ ակտիվների և Ծրագրի ազդեցության ենթակա ապրուստի այլ աղբյուրների: Ծախսերի նախահաշվում հաշվի կառնվեն մոնիտորինգի և վերահսկողության, ինչպես նաև պայմանական ծախսերը: Վերաբնակեցման հետ կապված բոլոր ծախսերը կֆինանսավորվեն վարկային միջոցների և/կամ ՀՀ բյուջեի հաշվին: Ծրագիրը չի կարող համարվել ավարտված, քանի դեռ չեն իրագործվել ՎԳԾ-երի բոլոր նպատակները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Կորստի տեսակ	Մասնանում	Ազդեցությանը ենթարկված անձինք ¹⁶	Իրավունքներ
1. Գյուղատնտեսական հողերի, այդ թվում մշակելի և անմշակ տիրազուրկ հողերի (օր.՝ արոտավայրեր, անտառային տարածքներ և այլն) մշտական կորուստ	Հողի կորստի բոլոր դեպքերը, անկախ ազդեցության լրջությունից	Ֆերմեր/սեփականատեր	<ul style="list-style-type: none"> * Փոխհատուցում հողով՝ կորցրած հողակտորին հավասար բերքատվությամբ, կամ * Ազդակիր հողի դիմաց դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով՝ հանած հարկերը, գրանցման և օտարման հետ կապված տուրքերը: * Պահանջվող «ROW»-ի ազդակիր այն հողակտորների մնացած մասերը, որոնք կրճատվել են մինչև 400մ2 կամ դարձել անպիտան անցանելիության, ռոտման և օգտագործման նպատակի փոփոխման պատճառով, կներառվեն ազդակիր հողում և կփոխհատուցվեն այնպես, ինչպես նկարագրվում է վերը:
		Վարձատու (գրանցված կամ ոչ)	<ul style="list-style-type: none"> * Կորցրած հողակտորի արժեքին / բերքատվությանը համարժեք այլ հողակտորների վարձակալության ժամկետի երկարաձգում, կամ վարձակալության մնացած տարիների համար (մինչև առավելագույնը 10 տարի) ազդակիր հողի համախառն բերքատվության շուկայական արժեքի դրամական համարժեքը:
		Բերքից համատեղ օգտվողներ (գրանցված կամ ոչ)	<ul style="list-style-type: none"> * Դրամական փոխհատուցում, որը համարժեք է կորցրած բերքի բաժնեմասի արժեքին և, անհրաժեշտության դեպքում, վերականգնման գծով աջակցություն (ենթակա է որոշման կոնկրետ ՎԳԾ-ում)
		Իրենց պայմանագիրը կորցրած գյուղատնտեսական և աշխատողներ	<ul style="list-style-type: none"> * Դրամական փոխհատուցում, որը համարժեք է գյուղատնտեսական տարվա մնացած ժամանակաշրջանի համար դրամական կամ բնեղեն վարձատրությանը և, անհրաժեշտության դեպքում, վերականգնման գծով աջակցություն (ենթակա է որոշման կոնկրետ ՎԳԾ-ում)
		Սեփականատիրոջ յան իրավունք չունեցող հողատերեր	<ul style="list-style-type: none"> * Հողօգտագործման կորստի դիմաց վերականգնողական միանվագ նպաստ, որը հավասար է մեկ գուտ բերքի շուկայական արժեքին (ի լրումն բերքի դիմաց փոխհատուցմանը), և անհրաժեշտության դեպքում, վերականգնման գծով աջակցություն (ենթակա է որոշման կոնկրետ ՎԳԾ-ում)
	Լրացուցիչ պահուստ լուրջ ազդեցությունների համար (կորցրած հողի >10%)	Ֆերմեր/սեփականատեր և վարձատու (գրանցված կամ ոչ)	<ul style="list-style-type: none"> * Ծանր ազդեցության դիմաց միանվագ նպաստ, որը հավասար է ազդակիր հողից ստացվող մեկ տարվա գուտ բերքի շուկայական արժեքին (ներառում է ձմռան և ամռան բերքը և լրացնում է բերքի դիմաց ստանդարտ փոխհատուցմանը և, անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցությանը)
		Բերքից համատեղ օգտվողներ (գրանցված կամ ոչ)	<ul style="list-style-type: none"> * Ծանր ազդեցության դիմաց միանվագ նպաստ, որը հավասար է մեկ տարվա բերքի բաժնի շուկայական արժեքին (ի լրումն մշակաբույսերի դիմաց ստանդարտ փոխհատուցման և, անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցության)

¹⁶Որոշվում է վերջնական ամսաթվին

		Սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերեր	* Ծանր ազդեցության դիմաց միանվագ նպաստ, որը հավասար է ազդակիր հողից ստացվող մեկ տարվա գուտ բերքի շուկայական արժեքին (ի լրումն մշակաբույսերի դիմաց ստանդարտ փոխհատուցման և, անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցություն)
3. Հողի ժամանակավոր կորուստ		Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Կվերականգնվեն ազդակիր հողերի և համայնքային ենթակառուցվածքների նախաձրագրային պայմանները: * Վարձակալական վճարը պետք է համաձայնեցվի հողատիրոջ և Կապալառույի միջև կամ հավասար լինի շուկայական արժեքի հիման վրա որոշված՝ կորցրած եկամուտին (օր.՝ կորցրած բերքի դիմաց փոխհատուցում մեկ հեկտարի հաշվով միջին բերքատվության հիման վրա) * Կորցրած ակտիվների դիմաց դրամական փոխհատուցում (օր.՝ շինություններ, ծառեր)
3. Բնակելի/առևտրային նշանակության հողեր		Սեփականատեր	* Հողի փոխհատուցման համար տրամադրվող հողակտոր, որն ունի կորցրած հողի հետ համադրելի արժեք և տեղակայման վայր, կամ * Փոխարինման լրիվ արժեքով դրամական փոխհատուցում ազդակիր հողի դիմաց՝ հանած հարկերը, գրանցման և օտարման հետ կապված ծախսերը:
		Վարձակալ/վարձատու	* Առավելագույնը երեք ամսվա նպաստ փոխարինող տարածք գտնելու համար
		Սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատեր	* Վերաբնակեցման պետական հողերի տարածքում անհատույց կամ վարձակալության հիմունքով հողակտորի տրամադրում կամ ինքնուրույն վերատեղակայման գծով նպաստ:
4. Տներ, շենքեր և շինություններ		Բոլոր համապատասխան ԾԱԿ-եր (տան կամ շենքի գրանցում ունեցող կամ չունեցող)	* Ազդակիր շինության և այլ հիմնական միջոցների դիմաց դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով՝ հանած վերաօգտագործելի նյութերի արժեքը, ամորտիզացիան և գործարքի հետ կապված ծախսերը: Մասնակի ազդեցությունների դեպքում ամբողջական դրամական աջակցություն շինության մնացած մասը վերականգնելու համար: Ջրամատակարարման և էներգամատակարարման կորցրած աղբյուրների արժեքը կներառվի փոխհատուցման գումարում:
5. Մշակաբույսեր	Ազդակիր/կորցրած մշակաբույսեր	Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Մշակաբույսերի դիմաց դրամական փոխհատուցում մեկ տարվա սովորական բերքի շուկայական լրիվ արժեքով, որը վճարվում է հողատերերին և վարձակալներին՝ հիմնվելով բերքի համատեղ օգտագործման շուրջ նրանց պայմանավորվածության վրա, և անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցություն (պետք է որոշվի կոնկրետ ՎԳԾ-ում)
4. Ծառեր	Ազդակիր / կորցրած ծառեր	Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Դրամական փոխհատուցումը պետք է արտացոլի եկամտի փոխարինումը: Պտղատու ծառերը կգնահատվեն՝ հաշվի առնելով մեկ տարվա համախառն եկամուտը՝ բազմապատկած միևնույն բերքատվությամբ ծառերի աճեցման համար պահանջվող տարիների թիվը:
7. Բիզնես / աշխատանք	Բիզնեսի կամ աշխատանքի ժամանակավոր կորուստ	Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Բիզնեսի սեփականատեր. Բիզնեսի ընդհատման ժամանակաշրջանի համար դրամական փոխհատուցում հարկային հայտարարագրի կամ պաշտոնապես սահմանված նվազագույն աշխատավարձի հիման վրա * Աշխատող՝ բիզնեսի ընդհատման ողջ ընթացքում կորցրած աշխատավարձի փոխհատուցում

	Բիզնեսի կամ աշխատանքի մշտական կորուստ	Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Բիզնեսի սեփականատեր. Մեկ տարվա եկամտին հավասար դրամական փոխհատուցում (հարկային հայտարարագրի կամ պաշտոնապես սահմանված նվազագույն աշխատավարձի հիման վրա) և անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցություն (պետք է որոշվի հատուկ ՎԳԾ-ում) Աշխատող՝ 3 ամսվա փոխհատուցում կորցրած աշխատավարձի դիմաց և անհրաժեշտության դեպքում վերականգնման գծով աջակցություն (պետք է որոշվի կոնկրետ ՎԳԾ-ում)
8. Ապրուստի միջոցներ	Սոցիալական աջակցության համակարգերի կորուստ	Բոլոր ԾԱԿ-երը (ներառյալ սեփականատիրոջ թյան իրավունք չունեցող հողատերերը)	* Վերականգնվելիք ապրուստի միջոցները պետք է առնվազն հավասար լինեն սեփականագրվումից, տեղահանումից և օգտվելու սահմանափակումից առաջ առկա մակարդակին: * Եթե կորուստների դիմաց փոխարինումը հասանելի չէ, ապա ռազմավարությունները կարող են ներառել հմտությունների զարգացումը, վարձու աշխատանքի տեղավորումը կամ ինքնագրադավաճությունը, ներառյալ վարկավորում ստանալու հնարավորությունը:
9. Վերատեղակայում	Տրանսպորտ և ապրուստի անցումային ծախսեր	Վերատեղակայման ազդեցությանը ենթակա բոլոր ԾԱԿ-եր	* Դրամական փոխհատուցման տրամադրում՝ վերատեղակայմանը պայմանավորված տրանսպորտային և ապրուստի ծախսերի դիմաց, ժամկետը պետք է որոշվի ՎԳԾ-ում
10. Տան բնակիչներ		Տունը վարձակալող բնակիչներ	* Տվյալ տարածքում գերակայող շուկայական գնով երեք ամսվա վարձակալության վճարի անհատույց տրամադրում և այլընտրանքային կացարան գտնելու հարցում աջակցություն
11. Համայնքային ակտիվներ			* Ազդեցությանը ենթարկված շինությունների / շենքերի (այսինքն՝ պաշտամունքի վայրի, հետիոտնային կամուրջների, ճանապարհների, դպրոցների, անտառային տարածքների և այլնի) նախաձեռնարկային վիճակի վերականգնում / փոխարինում նորով
12. Խոցելի մարդկանց ապրուստի աղբյուրներ		Աղքատության գծից ցածր ԾԱԿ-եր	* Առաջնահերթ աջակցություն ծրագրին առնչվող աշխատատեղերում տեղավորման, ուսուցման հնարավորությունների, ինքնագրադավաճության և վարձու աշխատանքի տեղավորման հարցում, * Վերականգնման գծով աջակցության փաթեթը պետք է որոշվի յուրաքանչյուր առանձին դեպքի վերլուծության հիման վրա

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿՍՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մարդիկ.

- * Ազդակիր մարդկանց յուրաքանչյուր խմբում մարդկանց և տնային տնտեսությունների ընդհանուր թիվ,

Յուրաքանչյուր անձի տարիք, սեռ և զբաղմունք

- * Խոցելիության ձևեր (օր.՝ հաշմանդամություն, սոցիալական աջակցության շահառու և այլն)

Գույք.

Անձնական գույք, ներառյալ հետևյալի նկատմամբ սեփականության իրավունքի մանրամասները.

- * Շինություններ՝ տներ, ֆերմերային շինություններ, խանութներ, արդյունաբերական շինություններ, ցորենի չորանոցներ, զուգարաններ և այլն,
- * Հողի տեսակ՝ ոռոգվող կամ չոռոգվող, անտառապատ տարածքներ, արոտավայրեր, տիրագուրկ հողեր և այլն,
- * Հողի վրա առկա բերքի նկարագրություն և մոտավոր արժեք,
- * Այլ՝ գյուղատնտեսական կենդանիներ, ջրհորներ, ծառեր, բնական ռեսուրսներ և այլն:

Հասարակական և ընդհանուր օգտագործման գույք.

- * Հող՝ ընդհանուր օգտագործման գյուղական հողեր, հավաքման և ֆուրաժի պատրաստման տարածքներ, ձկնորսության տարածքներ և այլն,
- * Շինություններ և հարմարություններ՝ դպրոցներ, առողջապահական հիմնարկներ, գերեզմանոցներ, տաճարներ, համայնքային կենտրոններ, հասարակական տրանսպորտ, բանկեր, կոոպերատիվներ և այլն,
- * Ենթակառուցվածքներ՝ խմելու ջրի և ջրամատակարարման այլ համակարգեր, անցանելիություն և ներքին ճանապարհներ, էլեկտրականության և էներգիայի այլ աղբյուրներ:

ԾԱԿ-երի եկամուտներ այլ աղբյուրներից, ներառյալ.

- * Եկամուտ ֆերմերային գործունեությունից,
- * Ոչ ֆերմերային աշխատանք,
- * Գործունեություն ոչ ֆորմալ հատվածում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ելակետային տեղեկատվություն

- a. Հարցաթերթիկի ծածկագիրը և հետազոտության ամսաթիվ
- b. Հարցում անցկացնողի անուն, ազգանուն
- c. Մարզի, շրջանի և գյուղի անվանում

2. Տնային տնտեսությունների հաշվառում

- a. Տնային տնտեսության գլխավոր և մնացած անդամների անուն, ազգանուն
- b. Տնային տնտեսության անդամների կապը գլխավոր անդամի հետ
- c. Տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի տարիքը և սեռը
- d. Ազգության մասին տեղեկատվություն
- e. Յուրաքանչյուր անդամի կրթական մակարդակը
- f. Յուրաքանչյուր անդամի հիմնական զբաղմունքը և ամսական եկամուտը
- g. Յուրաքանչյուր անդամի եկամուտը երկրորդային աղբյուրներից
- h. Աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության վայրը
- i. Տվյալ վայրում բնակվելու տևողությունը

3. Տիրապետման կարգավիճակ

- a. Հողի կարգ
- b. Հողատիրության տեսակ և սեփականատիրոջ/ՏՏ անդամի անուն, ազգանուն
- c. Սեփականատիրության մասին վկայող փաստաթղթի տեսակ
- d. Եթե չի տիրում, ապա սեփականատիրոջ անուն, ազգանունը և հասցեն
- e. Ոչ ֆորմալ օգտագործման իրավունքի դեպքում նշել պայմանագրի տեսակը
- f. Օգտագործման տարիների թիվ
- g. Բնակչի կողմից վճարվող ամսական վարձակալական վճար
- h. Վարձակալի կողմից արված ներդրումներ

Նշում. Եթե հաշվառումը և գույքագրումն անցկացվում են իրարից առանձին, ապա հաշվառման հետազոտության շրջանակում պետք է հավաքագրվի նաև որոշ տեղեկություն հողօգտագործման, ազդակիր շինությունների և այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ձեռնարկությունների մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Հողօգտագործում

1. Ներկա պահին օգտագործվող հող
2. Հողօգտագործման տարբեր նպատակներով օգտագործվող տարածքներ, եթե այդպիսիք առկա են
3. Հողի ընդհանուր օգտագործում, ներառյալ ազդեցության ենթակա հողը՝ նշելով օգտագործման նպատակները (եթե կիրառելի է)
4. Հետագա օգտագործման տեսանկյունից մնացած տարածքի կենսունակության գնահատում
5. Հողի ընդհանուր տարածք փոխհատուցման նպատակներով

2. Շինություններ

1. Շինության տեսակ
2. Հարկերի թիվ
3. Տարածքն ըստ հարկերի
4. Շինության սեփականատիրոջ անուն, ազգանուն
5. Կառուցման տարեթիվ
6. Շինության համար թույլտվության առկայություն
7. Շինության և տարածքների օգտագործում ըստ նպատակների (եթե կիրառելի է)
8. Տարիքի, պատերի և հատակի համար գործածված շինարարական նյութերի նկարագրություն ըստ մակերեսների
9. Հիմքի տեսակ
10. Շինության որևէ հատուկ առանձնահատկությունների նկարագրություն
11. Կոմունալ միացումներ (հաշվիչ, ջրամատակարարում և այլն)
12. Կոմունալ վճարներ
13. Շինության այն մասը, որը ենթակա է ազդեցությանը
14. Հետագա օգտագործման տեսանկյունից շինության մնացած տարածքի կենսունակության գնահատում
15. Շենքի ընդհանուր տարածք փոխհատուցման նպատակներով

3. Այլ շինություններ

1. Շինությունների տեսակներ (ջրհոր, առանձնացնող պատ, ցանկապատ, պահեստ և այլն)
2. Ազդեցության ենթակա ձկնարանի տարածք
3. Տնային տնտեսության միջին եկամուտ ձկնարանից
4. Ազդեցության ենթակա շինությունների տարածքների և շինարարական նյութերի նկարագրություն
5. Այլ օգտագործվող շինություններ

4. Գյուղատնտեսական ապրանքներ

1. Ազդակիր մշակաբույսերի տեսակ
2. Ազդակիր մշակաբույսերի սեփականատեր

3. Ազդակիր հողի վրա աճեցվող մշակաբույսերի ընդհանուր տարեկան բերքատվություն
4. Մշակաբույսերի միջին բերքատվություն
5. Շուկայում իրացվող արտադրանք
6. Մշակաբույսերի աճեցման մեջ ներգրավված աշխատողների / աշխատուժի թիվ
7. Մշակաբույսերի միջին արժեք
8. Տնային տնտեսության միջին եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից

5. Ծառեր

1. Ազդակիր ծառերի թիվ և տեսակներ
2. Ծառերի տարիք
3. Ծառերի սեփականատիրոջ անուն, ազգանուն
4. Բերքատու ծառերի միջին բերքատվություն
5. Միջին տարեկան եկամուտ պտղատու ծառերից

6. Ձեռնարկատիրություն

1. Ազդակիր բիզնեսի տեսակ
2. Ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն
3. Ձեռնարկության գրանցման/թույլտվության համար (ստուգել փաստաթուղթը)
4. Ձեռնարկատիրական գործունեությունից տնային տնտեսության ստացած ընդհանուր տարեկան եկամուտ
5. Ձեռնարկության միջին գործառնական ծախսեր
6. Ձեռնարկության աշխատողների թիվ
7. Մշտական և ժամանակավոր աշխատողների թիվ
8. Եկամտային հարկի նպատակով հայտարարագրված միջին եկամուտ ու շահույթ (ստուգել փաստաթուղթը)
9. Ձեռնարկության վերատեղակայման անհրաժեշտություն

7. Ծրագրի ազդեցությանը ենթակա կոմունալ համակարգեր և շինություններ

1. Ազդակիր համայնքային ենթակառուցվածքների նկարագրություն
2. Ազդակիր շինությունների նկարագրություն ըստ տարածքի և շինարարական նյութերի
3. Շինությունների / ենթակառուցվածքների բացասական ազդեցությանը ենթակա բնակչության մոտավոր գնահատված թիվը

8. Նախապատվություն վերատեղակայմանը

1. Վերատեղակայման կամ վերակազմավորման անհրաժեշտություն
2. Հողի դիմաց փոխհատուցման նախապատվելի տարբերակ (դրամական կամ բնեղենով)
3. Շինության դիմաց փոխհատուցման նախապատվելի տարբերակ
4. Եկամտի վերականգնման գծով աջակցության նախապատվելի տեսակ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՎԳԾ-Ի ԵՎ ԿՐՃԱՍՏՎԱԾ ՎԳԾ-Ի ՁԵՎԱԶՍՓԵՐԸ

Ամբողջական ՎԳԾ	Կրճատված ՎԳԾ
<p>Պարունակում է նպատակների, քաղաքականությունների և սկզբունքների սահմանումը և սովորաբար ներառում է հետևյալը.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ծրագրի նկարագրություն, 2. Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հնարավոր ազդեցությունները, 3. Նպատակները, 4. Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններ, սպասվող հետևանքներ, 5. Իրավական դաշտ, 6. Իրավունակություն, 7. Վնասների գնահատում և փոխհատուցում, 8. Վայրի ընտրություն, նախապատրաստում և վերատեղակայում, 9. Բնակարանային, ենթակառուցվածքային և սոցիալական ծառայություններ, 10. Կազմակերպչական պարտականություններ, 11. Հանրության մասնակցություն, խորհրդակցություն և բողոքարկման մեխանիզմ, 12. Իրականացման ժամանակացույց, 13. Նախահաշիվ և բյուջե, 14. Մոնիտորինգ և գնահատում 	<p>Ներառում է հետևյալ նվազագույն տարրերը¹⁷.</p> <ol style="list-style-type: none"> 1. Տեղահանված անձանց հաշվառման հետազոտություն և ակտիվների գնահատում, 2. Տրամադրվելիք փոխհատուցման և վերաբնակեցման գծով աջակցության նկարագրություն, 3. Տեղահանված անձանց հետ խորհրդակցություններ ընդունելի այլընտրանքների շուրջ, 4. Իրականացման համար ինստիտուցիոնալ պատասխանատվություն և բողոքների կարգավորման ընթացակարգեր, 5. Մոնիտորինգի և իրականացման մեխանիզմներ, և 6. Ժամանակացույց և բյուջե:

¹⁷ Պլանը նաև նախատեսում է հիմնական սոցիալ-տնտեսական հետազոտության և եկամուտների վերականգնման միջոցառումների իրականացում այն դեպքում, երբ տեղահանված անձանցից մի քանիսը կորցնում են իրենց արտադրական ակտիվների ավելի քան 10%-ը կամ պահանջում են ֆիզիկական վերատեղակայում:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նշում. Ներածական տեղեկատվությունը, տնային տնտեսությունների կարգավիճակը և հողօգտագործման մասին տեղեկատվությունը պետք է լինի նույնը, ինչ վերը ՀԱՎԵԼՎԱԾ 4-ում («Տվյալների ցանկ հաշվառման հետազոտության համար»)

Լրացուցիչ տեղեկատվությունը կներառի հետևյալը.

1. Կոմունալ և սոցիալական ծառայությունների հասանելիություն

- Էլեկտրամատակարարում
- Հասանելի ջրամատակարարման տեսակները
- Շենքում կոյուղու համակարգի տեսակը
- Դպրոցից հեռավորությունը
- Առողջապահական հիմնարկներից հեռավորությունը
- Շուկայից հեռավորությունը

2. Տնային տնտեսության գույք

- Տնային տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների տեսակն ու քանակը
- Տնային տնտեսությանը պատկանող և բիզնեսի նպատակներով օգտագործվող այլ սարքավորումների տեսակը
- Ծրագրի ազդեցությանը ենթարկված սարքավորումների գնահատված մոտավոր արժեքը
- Տնային տնտեսությանը պատկանող տրանսպորտային միջոցի տեսակը (հեծանիվ, մոտոցիկլ, բեռնատար ավտոմեքենա, սայլ, ավտոմեքենա և այլն)
- Տնային տնտեսությանը պատկանող հիմնական խոհանոցային տեխնիկան (սալօջախ, վառարան և այլն)
- Սառնարանի, ռադիոյի, հեռուստացույցի և այլնի նկատմամբ սեփականության իրավունքը
- Շենքի ընդհանուր պայմանները (գերազանց, լավ, միջին, վատ)
- Տնային տնտեսության կահավորման ընդհանուր պայմանները (կահույք, պահարաններ և այլն)

3. Տնային տնտեսության եկամուտ և ծախս

- Տնային տնտեսության տարեկան միջին եկամուտը բոլորադրյուններից
- Հիմնական միջին ծախսերը՝ սնունդ, տրանսպորտ, առողջապահական ծառայություններ, կրթություն
- Բանկից, ընկերներից կամ հարազատներից վերցված վարկեր/պարտք
- Մոտավոր խնայողությունները, եթե այդպիսիք առկա են:

4. Տիրապետած հմտություններ

- Տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի հմտությունները
- Հետագա զարգացման տեսանկյունից նախապատվելի ուսուցման կամ հմտությունների տեսակները

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳՈՒՑՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑՆԵՐ

Ներածություն

Ինչպես նշվում է վերը (տես Բաժին 3.3), ազդակիր անձանց (ԾԱԿ-եր) գույքի գնահատումը կատարվում է երկու բաղադրիչների շրջանակում: Դրանցից առաջինը ԾԱԿ-ին պատկանող կամ նրա կողմից արտադրական նպատակներով օգտագործվող գույքի փոխարինման արժեքն է: Երկրորդը ԾԱԿ-ին միանվագ վճարվող փոխհատուցումն է, որը (ֆինանսականառումով) որոշվում է որպես ընթացիկ փոխարինման արժեքից բարձր գումար՝ նախատեսված ԾԱԿ-ին պատճառած անհարմարության, նրա բնակության կամ տեղակայման վայրի փոփոխմամբ պայմանավորված ժամանակի կորստի, տեղակայման նոր վայրը փոխարինված գույքի արտադրական մակարդակին հասցնելու համար պահանջվող լրացուցիչ ներդրումների, տեղափոխման ընթացքում չվաստակած եկամուտների և համանման վնասների դիմաց փոխհատուցման համար:

Հարկ է ի սկզբանե նշել, որ ստորև նկարագրվածը վերջնականորեն սահմանված շրջանակ չէ, այլ ներկայացնում է բանակցելի ուղեցույցների և առաջարկությունների խումբ: Թեև Ուղեցույցները պարունակում են որոշակի ճկունություն, սակայն դրանց կիրառումը կհանգեցնի երկրի տարբեր մասերում որոշված արժեքների և փոխհատուցման մեխանիզմների միջև տարբերության: Կախված ծրագրի և նրա ազդեցությունների բնույթից՝ որոշ ֆերմերների բոլոր հողատիրությունների համար կարող են պահանջվել վերաբնակեցման գծով վճարումներ, կամ, ելնելով ֆիզիկական ազդեցությունների շրջանակից և բնույթից, կարող է ի հայտ գալ միայն մի քանի հեկտարների առնչությամբ նման վճարումներ կատարելու անհրաժեշտությունը: Բանը նրանում է, որ ամեն մի դեպք կտարբերվի մյուսներից և կպահանջի ազդակիր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցում տեղում: Սովորաբար զգալի ժամանակ ու ջանք է պահանջվում բավարար արդյունքների հասնելու համար:

Հողի գնահատում

Ազատ շուկայական տնտեսությունում հողի (գյուղատնտեսական և քաղաքային) արժեքը որոշվում է անշարժ գույքի շուկայում հողի գնման կամ վաճառքի գնով: Հայաստանում գյուղատնտեսական հողերի շուկան փոքր է կամ ոչ ակտիվ: Ներկայում Հայաստանը միջին դիրք է զբաղեցնում, մի կողմից, գյուղատնտեսական հողերի մեծ մասի մասնավորեցման արդյունքում հողի սահմանափակ շուկա ունեցող, կադաստրային գնահատումներ և հողօգտագործման նկարագրեր սահմանած երկրների, և, մյուս կողմից, հողի շուկա չունեցող (այսինքն՝ գյուղատնտեսական հողերը կոլեկտիվ սկզբունքով օգտագործող) երկրների միջև: Չնայած հողերի մասնավորեցմանը և հողերի գնահատման նպատակով կադաստրային հետազոտություններին, հողերի վաճառքի ծավալները փոքր են: Շատ քիչ թվով հողատերեր են ժամանակի ընթացքում գնում կամ վաճառում իրենց հողակտորները: Հողատերերը որոշակիորեն պատկերացնում են, թե ինչ արժեն իրենց պատկանող հողերը: Ստորև Ուղեցույցների նպատակն է հստակեցնել հողատիրոջ կողմից մոտավոր գնահատված արժեքը, որը թույլ կտա Ծրագրին որպես փոխարինում կամ փոխհատուցում տրամադրելու այլ հող՝ երկու կողմերի համար գոհացուցիչ լուծում ապահովելու նպատակով:

ՀՀ Կադաստրի կոմիտեն դասակարգել է հողերը: Սա թույլ է տալիս մեզ պայմանական արժեքների հիման վրա գնահատել տարբեր հողակտորները՝ հաշվի առնելով այն, թե արդյոք կոնկրետ հողատարածքը վարելահող է, թե՛ ոչ, ոռոգվում է, թե՛ ոչ, հեշտորեն հասանելի է, ունի բարձր, թե ցածր արդյունավետություն, ինչպես նաև շուկայական այլ չափանիշներ: Հողակտորների դասակարգման նպատակով կարող են կիրառվել ցանկացած թվով կադաստրային ցուցանիշներ: Սույն ուղեցույցների նպատակների համար առանձնացվել են գյուղատնտեսական հողերի հինգ դասեր՝ գերադասելիության կարգով (հողի շուկայի առկայության դեպքում պոտենցիալ գնորդների համար) դրանք գնահատելու նպատակով կիրառելով տարբեր ցուցանիշներ:

Հողի արժեքի հաշվարկը

Օրինակ՝ 1-ին դասից (ամենանվազ գերադասելի) մինչև 5-րդ դասին (ամենագերադասելի) պատկանող հողերը կարող են դասակարգվել հետևյալ ցուցանիշներին համապատասխան.

- 1-ին դասի հողեր՝ վատ հողեր, որոնք գտնվում են գյուղից հեռու և չեն ոռոգվում
- 2-րդ դասի հողեր՝ համեմատաբար լավ վարելահողեր, որոնք գտնվում են գյուղից հեռու և չեն ոռոգվում
- 3-րդ դասի հողեր՝ լավ վարելահողեր, որոնք ոռոգվում են, ունեն չափավոր ջրահեռացում և կարող են նաև ծառայել որպես արոտավայրեր
- 4-րդ դասի հողեր՝ լավ վարելահողեր, որոնք ունեն լավ ոռոգման և ջրահեռացման համակարգ, կարող են ծառայել որպես արոտավայրեր և գտնվում են գյուղից չափավոր հեռավորության վրա,
- 5-րդ դասի հողեր՝ գերազանց հողեր, որոնք կարող են օգտագործվել բարձրարժեք մշակաբույսերի աճեցման համար, ունեն լավ ոռոգման և ջրահեռացման համակարգ, կարող են ծառայել որպես արոտավայրեր և գտնվում են գյուղին ու ճանապարհին մոտ

Ծրագրի նպատակներով սեփականագրկման ենթակա կոնկրետ տարածքի դեպքում նախ անհրաժեշտ է որոշել տվյալ տարածքում տարբեր դասերին պատկանող հողերի հարաբերական տեսակարար կշիռները: Ենթադրենք, որ սեփականագրկման է ենթակա ջրամբարի համար նախատեսված 220 հա հող, որը մոտավոր դասակարգվել է հետևյալ կերպ.

- 1-ին դաս —20% 20հա
- 2-րդ դաս —10% 60հա
- 3-րդ դաս —40% 80հա
- 4-րդ դաս —30% 20հա
- 5-րդ դաս —10% 40հա

Հստակ երևում է, որ սա կարող է լինել բարձր արդյունավետ տարածք, որտեղ հողի մոտ 64%-ը (140հա) դասակարգվել է որպես լավ վարելահող:

Նախ, հարկ է պարզել մոտակա այնպիսի այլընտրանքային տարածքի առկայությունը, որտեղ կարող է կառուցվել առաջարկվող ջրամբարը և որի հողերի արդյունավետությունը ավելի ցածր է: Որոշ դեպքերում ջրի հունի ուղղությամբ կամ դրան հակառակ փոքր-ինչ տեղաշարժի շնորհիվ

հնարավոր է նվազեցնել փոխհատուցման և վերաբնակեցման հետ կապված ծախսերը:

Օրինակ, եթե կիրառենք Մարտունու շրջանի ընտրանքային տվյալները, ապա 1 հեկտարի հաշվով գյուղատնտեսական հողերի գինը սկսվում է նվազագույնը 51,100 ՀՀ դրամից և առավելագույնը հասնում 2,850,000 ՀՀ դրամի: Այսպիսով, կարող են մոտավոր գնահատել հողերի հարաբերական արժեքները՝ վերցնելով յուրաքանչյուր դասին պատկանող հողի արժեքի կրկնապատիկը: Որոշ առաջարկվող արժեքներ ներկայացվում են ստորև.

- 1-ին դասի 1 հա հողի արժեքը կարող է լինել 50,000-ից 100,000 ՀՀ դրամ
- 2-րդ դասի 1 հա հողի արժեքը կարող է լինել 100,000-ից 350,000 ՀՀ դրամ
- 3-րդ դասի 1 հա հողի արժեքը կարող է լինել 350,000-ից 1,000,000 ՀՀ դրամ
- 4-րդ դասի 1 հա հողի արժեքը կարող է լինել 1,000,000-ից 1,750,000 ՀՀ դրամ
- 5-րդ դասի 1 հա հողի արժեքը կարող է լինել 1,750,000-ից 2,850,000 ՀՀ դրամ

Հողերի արժեքների տիրույթը պետք է էմպիրիկ եղանակով ստուգվի դաշտային հետազոտությունների, ինչպես նաև փաստացի շահագրգիռ կողմերի շրջանում անցկացվող հետազոտական գնահատումների միջոցով: Կադաստրային հետազոտությունները և հարկային գրանցումները ևս կարող են օգտագործվել հողերի արժեքների առավել ստույգ տիրույթը որոշելու նպատակով:

Այնուհանդերձ, հիմնվելով հողերի մեր ենթադրվող արժեքների վրա՝ կարող ենք մոտավոր գնահատել ջրամբարի համար նախատեսված 220 հա հողերի սեփականազրկման դիմաց փոխարինման արժեքի առավելագույն ու նվազագույն բյուջեն հետևյալ կերպ.

	Նվազագույն (հազար)	Առավելագույն (հազար)
20հա 1-ին դասի հողեր՝ 50,000-100,000 դրամ/հա	1,000	2,000
60հա 2-րդ դասի հողեր՝ 100,000-350,000 դրամ/հա	6,000	21,000
80հա 3-րդ դասի հողեր՝ 350,000-1,000,000 դրամ/հա	28,000	80,000
20հա 4-րդ դասի հողեր՝ 1,000,000-1,750,000 դրամ/հա	20,000	35,000
40հա 5-րդ դասի հողեր՝ 1,750,000-2,850,000 դրամ/հա	70,000	114,000
Հողի փոխարինման մոտավոր արժեք (հազար ՀՀ դրամ)	<u>125,000</u>	<u>252,000</u>

Ենթադրվող վատթարագույն սցենարում սեփականազրկված 220 հա հողի առավելագույն փոխարինման արժեքը մոտ 252,000,000 ՀՀ դրամ է (մոտ 624,000 ԱՄՆ դոլար՝ հաշվարկված 2013թ. հունվարի 9-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի 1 ԱՄՆ դոլար/403.87 ՀՀ դրամ հաշվարկային փոխարժեքը): 220 հա հողի փոխարինման նվազագույն մոտավոր արժեքը 125,000,000 ՀՀ դրամ է (մոտ 310,000 ԱՄՆ դոլար):

Ի լրումն, կարող է ի հայտ գալ ԾԱԿ-երի կրած այլ վնասների ֆինանսական փոխհատուցման անհրաժեշտությունը, որոնք նկարագրվում են սույն RPF-ում: Փոխհատուցման որոշումը բարդանում է այն պատճառով, որ մասնավոր անհատներին ուղղակի վճարումներ կատարելու համար կպահանջվեն հանրային դրամական միջոցներ: Պետական մարմինների մեծ մասը խուսափում են այս գործելակերպից՝ ելնելով պատշաճ վարվելակերպի, թափանցիկության բացակայության կամ կոռուպցիայի տպավորություն չթողնելու նկատառումից:

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. «Հազարամյակի մարտահրավեր – Հայաստան» ՊՈԱԿ, Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ (2009)
2. Հայաստանի Հանրապետություն. Մահմանադրություն (1995թ., փոփոխված 2005թ.-ին)
3. Հայաստանի Հանրապետություն. Քաղաքացիական օրենսգիրք (1998)
4. Հայաստանի Հանրապետություն. Հողի օրենսգիրք (2001)
5. Հայաստանի Հանրապետություն. Սոցիալական/հանրային և պետական կարիքների համար գույքի օտարման մասին օրենք (2006)
6. Հայաստանի Հանրապետություն. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1998)
7. Հայաստանի Հանրապետություն. Վարչական դատավարության օրենսգիրք (2007)
8. Հայաստանի Հանրապետություն. Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենք (2005)
9. Համաշխարհային բանկ. «Environmental Assessment Sourcebook, Volume I: Policies, Procedures and Cross-Sectoral Issues» (1991; fourth printing - 1996)
10. Համաշխարհային բանկ. «Environmental Assessment Sourcebook, Volume II: Sectoral Guidelines» (1991; fourth printing - 1996)
11. Համաշխարհային բանկ. «Operational Policy on Involuntary Resettlement» (WBOP 4.12) (January 2002)
12. Համաշխարհային բանկ. «Operational Policy on Involuntary Resettlement – Annex A to OP 4.12» (January 2002)
13. Համաշխարհային բանկ. «Bank Procedure (BP) 4.12» (January 2002)
14. Համաշխարհային բանկ. «Involuntary Resettlement Sourcebook and Appendices» (2004)

